



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ԺԱ. — ՇՐՋԱՆ Ժ.

ՏԱՐԻ Ժ. — ՆՈՅԵՄ. 30.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի ԽՐԱԿՐՈՒԹԵՆԷ ԱՐԱՅՍ ԱՄԱԳՐՈՅՍ.

Յառաջիկայ Դեկտեմբեր ամսում Ամսագրոյս տասներորդ շրջանը լրանալով, 1878 տարւոյ Յունվարէն ըսկըսեալ պիտի փութայ Մետասաներորդ շրջանը շարունակել:

Ուստի կըխնդրեմք մեր սիրելի Ազգայիններէն, ինչպէս որ բարեջան Գործակալաց գրուած եւ պատուիրեալ է, գէթ ց 15 յառաջիկայ Փետրուար ամսոյ, բարեհաճին յայտնել խմբագրութեանս կամ Ա. Էջմիածնի Տպարանական ժողովոյն, եթէ կցանկան նոր շրջանում բաժանորդագրուիլ Արարատ ամսագրոյս, որպէս զի կանխաւ կարեւոր եղածը տնօրինուի, եւ երկուստէք ղժուարութեանց առիթ չըտրուին:

Բաժանորդագինը չորս ռուբլի է:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՐԱՐԵՆՊԱՏԱԿ

ՏՐՄԵԱՐԳՈՐԹԱԻՆՔ

ԵՒ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ - ԱԶԳԱՅԻՆ

Ա Պ Ա Հ Ո Վ Ե Ա Լ Դ Պ Ր Ո Ց Ք .

Անշնորհի հարկաւոր է միշտ՝ ամեն տեղ եւ ամեն տեսակ բարեգործական՝ բարենպատակ շինուածներ հաստատելէն առաջ՝ կանխաւ խորհել՝ որոնել՝ հնարել եւ ապահով կերպով յատկացնել նոցա համար ըստնիւթականին կարեւոր եղած գրամոց կամ եկամտից աղբիւրները թէ ի պէտս կառուցման շինուածոցն եւ թէ ի պէտս տնտեսական կառավարութեանցն, որպէս զի նպատակին եւ ձեռնարկութեան յաջողութիւնը՝ ապահովութիւնը եւ արդիւնաւորութիւնը յարատեւ լինի՝ եւ աւագի վերայ հիմնուած շինութեան չմանի:

Երբեմն կարելի կլինի՝ այս ինքն յաջողուած է եւ կ'յաջողուի՝ առանց կանխաւ ամեն միջոցները խորհելոյ եւ պատրաստելոյ՝ զանազան բարենպատակ շինուածոց ձեռնարկել, զայնս ի գլուխ տանել եւ բաղձացեալ նպատակին եւ ստանայեցնել. այս ընթացքը թէպէտ երբեմն կ'յաջողի, սակայն ընդհանրապէս եւ ընդհանուրի համար երբէք ապահով եւ յարատեւ յաջողութեամբ չկրնար պահուիլ. մի գործունեայ անձն կարող է այսպիսի ընթացքում հազիւ հազ յաջողել, իսկ նորա յաջորդը կամ այլք անձեռնհաս կը գտնուին եւ գործը կը

խանգարուի եւ կամ իսպառ կ'իստիանուի:

Սոցա հեռ ի միասին՝ այսպիսի ձեռնարկութեանց ժամանակ նաեւ միշտ նկատել պէտք է՝ թէ ո՞վ է հիմնարկող հաստատողն, ո՞ր եւ ո՞ր ազգի կամ ժողովրդեան համար:

Առհասարակ ամեն ձեռնարկութեանց յարատեւ յաջողութեան համար ապահով միջոցն է՝ կանխաւ խորհել՝ գտնել եւ յատկացնել թէ ըստնիւթականին եւ թէ ըստ ամենայնի կարեւոր եղած գումարները եւ եկամուտները, եւ այնպէս սկսանիլ եւ շարունակել մտադրեալ ձեռնարկութիւնը: Սակայն զայս Հայոց համար խորհելով եւ կշռելով՝ եթէ ամեն ժամանակ՝ ամեն տեղ եւ ամեն գործոց համար յատկանոն բռնել անհրաժեշտ լինի, շատ սակաւ կ'պատահի՝ որ բարենպատակ ձեռնարկութիւնք եւ հաստատութիւնք հիմնուին՝ միշտ սպասելով՝ զի կանխաւ նիւթական ամեն կարեւորութիւնքը եւ միջոցները պատրաստուին եւ ապահովուին: Այլ ինչո՞ր է՝ եթէ եզակի հարուստ անձերէն մինը խորհի եւ գործէ, կամ քաղաքական իշխանութիւն ունեցող մի հօր մարմին խորհի եւ գործէ, եւ կամ գոնէ ձեռնարկուներուն աջակցի: Բայց դարձեալ հեշտ է իմանալ, որ այս միջոցը ինչպէս ամեն ազգաց եւ տեղեաց համար՝ նոյնպէս Հայոց համար ընդհանրապէս անկարելի է, վասն զի ամեն ազգի մէջ եւ ամեն տեղում՝ ինչպէս նաեւ Հայոց մէջ՝ եզակի հարուստներ՝ քաղաքական իշխանութիւնք չկան, իսկ այլոց մէջ գտնուածները մի ազգի հա-

մար են. ուրեմն չունեցողները ի՞նչ պէտք է անեն: — Մասնաւորեմք:

Երբ գործադիր պարտաւորութիւնը եւ իշխանութիւնը միայն եկեղեցական Վարչութեան կրօնական եւ բարոյական զօրութեան վերայ հիմնուած է: այսպիսի ձեռնարկութեանց յաջողութեան եւ ապահովութեան համար կրմնայ միակ միջոց մի՛ այն է Ազգային հանգանակ—նի—ն, որ թէեւ դարձեալ բոլորովին ապահով եւ յուսալի միջոց չէ, բայց հպատակ ազգաց համար՝ միւս միջոցներէն նախագաս պիտի համարուի եւ է: Ասել կամիմք զի երբ զօ. Հայք հը պատակ ազգ են, ունին միայն եկեղեցական — ազգային իշխան—նի—ն եւ վարչ—նի—ն, եւ այս իշխանութեան զօրութիւնը կեդրոնացած է լոկ կրօնական — բարոյականի վերայ, միանգամայն համար ազգային հանգանակութեան միջոցը ունին ամեն ազգային եւ եկեղեցական ձեռնարկութեանց համար, բայց սակայն Հայոց համար երբ այս կամաւոր հանգանակութեան խնդիրը մի որոշ սահման եւ ոյժ չունենար՝ դարձեալ մի անկանոն եւ տկար միջոց կհամարուի ենթադրելով նաեւ զի ի Հայս բաւական հարուստներ կան, բայց կշռելով ամենուն եւս ցրուած լինելը, ամենուն գաղափարներուն միանման եւ մի ուղղութեամբ չլինելը, Հայոց ազգի բազմացրիւ վիճակը, Ազգի եւ եկեղեցւոյ կարօտութեանց խիստ շատ՝ բազմաթիւ՝ բազմատեսակ եւ առհասարակ ամեն տեղ զգալի լինելը խորին ուշադրութեամբ երեւակայելով, ինչպէս նաեւ եթէ միշտ հարուստներուն զիմել հարկ լինի՝ ա-

մենը ձեռնհաս չկրնար լինելը կամ թէ բազմաց գուցէ չսփազանց ձանձրութեանց պատճառ արուելիքը եւ զգացմանց վիրաւորուելիքը կշռելով, պարզապէս եւ շատ հեշտ կարելի է հետագայ եզրակացութեան եւ համոզման մէջ կանգ առնուլ, զի ձեռք առնլով վասն մեր միակ եւ ամենապահով միջոցը եղող ազգային հանգանակ—նի—նը՝ որ Հայոց համար գլխաւոր նեցուկ եւ ծայրագոյն միջոց կրնայ համարուիլ, դարձեալ անկարելի է ամեն ձեռնարկութեանց մէջ յաջողութիւն եւ ապահովութիւն գրտնել յուսալ, վասն զի միշտ պէտք է յիշել եւ կրկնել՝ որ կարօտութիւնքը անչափ եւ ծանրակշիռ են, մեր ազգը ամեն տեղ ցրուած է եւ մասնաւանդ ուր որ մեր եղբարք բնակուած են՝ գոնէ ըստ մեծի մասին բազմաթիւ քանակութեամբ կեդրոնացած չեն, այլ յաւէտ փոքրիկ եւ տկար խումբերով ցանուցրիւ բնակուած են, որով թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս միացեալ զօրութիւն ամեն տեղ կամ գէթ շատ տեղ չեն կարող կազմել:

Այսպիսի վիճակում պէտք է սպասել՝ որպէս զի բարենպասակ ձեռնարկութեանց համար միշտ եւ ամեն տեղ ընդհանուր ազգային հանգանակութիւն բացուի, դրամ հաւաքուի եւ այնպէս գործ տեսնուի: — Ամեն բանագէտ անձն ինքնին կհասկանայ զի մեր վիճակ չներբեր սպասել:

Վասն զի ամեն տեղ մեր Ազգի եւ եկեղեցւոյ գլխաւոր կարօտութիւնքը կբաղկանան եկեղեցիներ եւ դպրոցներ հաստատելոյ եւ զայնս կառավարելոյ

խնդիրներէն, եւ եթէ գրամոց պակասութիւնքը նկատելով եւ պատճառելով՝ երբէք չձեռնարկեմք եւ սպասեմք, կնշանակէ որ երբէք մի գործոյ եւս չպիտի սկսանիմք կամ՝ չեմք կարող յոյս ունենալ՝ որ երբ եւ իցէ կարող եմք այս կամ այն բարենպատակ ձեռնարկութեան սկսանիլ եւ յաջողութիւն գտնել:

Ի ներկայիս շատ տեղ ունիմք բարեգործական շատ հաստատութիւնք՝ — եկեղեցիներ, դպրոցներ, վանք եւ հիւանդանոցներ եւնի՝ ի սոցանէ քանի՞ հատին համար կարող եմք ապացուցանել՝ որ մեր նախնիք նոցա համար կարեւոր եղած նիւթական պէտքերը եւ ապահովութիւնքը կանխաւ պատրաստեցին եւ այնպէս ի գործ ձեռնարկեցին: Եթէ գէթ 3-4 հատի համար կարողանամք ապացուցանել, մնացելոց համար երբէք չեմք կարող ապացուցանել, մանաւանդ զի կրնամք տեղեկանալ՝ որ ոմանք հետզհետէ նպաստներ ստանալով շինուած են եւ գրամական աղբիւրներ յատկացուցած, իսկ բազումք մինչեւ ցայսօր ժողովրդեան կամաւոր նուիրաբերութեամբք տարեկան նուպաստներ ընդունելով՝ իւրեանց գոյութիւնքը պահած են, եւ կտեսնեմք շատ եկեղեցիներ՝ որ իւրեանց եկամուտներով դպրոցաց եւս կօգնեն: Եւ եթէ կանխաւ պատրաստելոյ եւ ապահովելոյ համար սպասել հարկ լինէր, ուրեմն վերեւ յիշուած հաստատութիւններէն այսօր քանի հատը ի պատրաստի կունենայինք, եւ — յօգուածոյս բուն նպատակին համաձայն՝ համառօտագոյն

տեսութեամբ — մասնաւորելով դպրոցաց կենսական եւ նուիրական խնդիրը՝ եւ եթէ ամեն տեղ դպրոցներ չունենայինք եւ չհաստատէինք, հապա ո՛ր եւ ի՞նչպէս պիտի աւանդէինք Հայոց լեզուն եւ կրօնը եւ եկեղեցական — ազգային եւ այլ գիտելիքները: Մանաւանդ զի մեր Ազգի մէջ տեսնուած մի ընդհանուր սովորութիւնը կնկատեմք՝ որ ամեն տեսակ բարենպատակ ձեռնարկութեանց կանխաւ նպաստել կդժուարանան, բայց երբ արդէնքը կտեսնեն՝ ոչինչ գրեթէ չեն խնայեր: — Սորա համար ապացոյցներ եւ բացատրուելիք պատճառներ խիստ շատ կան: — Շատ երկար կլինի եթէ բացատրեմք թէ որքան դժուարութիւնք կան ժողովրդական կամաւոր հանդանակութիւններ բանալով՝ կանխաւ գումարները եւ աղբիւրները պատրաստել մտադրեալ բարեգործական հաստատութիւնքը ապահովելոյ եւ ամեն ձեռնարկութեանց սկսանելոյ համար:

Ի վերայ այսր ամենայնի՝ պէտք է միշտ մեծ եռանդով ջանալ եւ տարածել մեր ժողովրդեան եւ Ազգի մէջ այն համոզումը՝ որ ամեն բանի համար կանխաւ նիւթական ապահովութիւնը ձեռք բերուի եւ ապա ի գործ ձեռնարկուի: Բայց մինչեւ որ այս իղձը եւ սկզբունքը ընդհանրանայ՝ — եւ չեմք կարող ճիշտ գիտնալ՝ թէ որքան ժամանակու՞մ կը յաջողիլի: — Հայոցս համար ընդհանուր տեսութեամբ առ այժմ աւելի ուրիշ ապահով միջոց չկայ կանխաւ ապահովեալ ինչպէս ուրիշ բարենպատակ հիմնարկութիւններ՝ նոյնպէս մանաւանդ

եկեղեցական — ազգային դարձուցներ ու-
նենալոյ համար, եւ պէտք է որ ըստ
նախնական սովորութեան շարունա-
կուի*):

Վ. Ե. Մ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃՆՆԵՊԵՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՍՐԷ:

Գ. Հ. ՅԵՐԵՏԱԿԱՐԵՆԻՑ ՀԱՆՆԵՆ:

1842 թ. Ի. 12 ՕԿՏՈՍՈՍԻ.

ՄՍՂԱՐՔՈՒ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔՈՒՄԸ:

(Շարունակութիւն)

Երորդ օրը մի և նոյն տիրացուն Մար-
տիրոս անուն եկաւ թէ, սրբազանը ողջոյն

(*) Այս առթիւ հարկ է անկեղծութեամբ եւ գո-
հութեամբ նկատելով ճշմարիտը խոստովանել, եւ նոյն
խով վերջին քսան տարուայ ազգային վիճակը կշռե-
լով ընդհանրապէս կտեսնենք, զի բաւական մեծ եւ
միջիծարական բարեփոխութիւնք եղած են եւ կըլի-
նին գրեթէ ամեն տեղ ինչպէս ազգային գործոց եւ
վարչական կազմութեան՝ նոյնպէս բարենպաստակ
ձեռնարկութեանց հաստատութեանց եւ դպրոցաց
խնդրոց մէջ, եւ սակաւ բացառութիւնքը ի մի կողմ
դնելով պարզապէս կտեսնենք՝ զի տակաւ առ տա-
կաւ՝ բայց միշտ դէպ ի բարին եւ ի յառաջողէմ
զարգացումն մեծ ջանք եւ բաւական յաջողութիւն
եղած է, եւ եթէ անփորձ անմիք եւ օտարազործիք
դիմակաւորներ չյաճախէին՝ անշուշտ աւելի մեծ
բարեփոխութիւններ եւ միջիծարական ձեռնարկու-
թիւններ կերեւէին: Ինչ եւ իցէ, բաւական է որ յա-
րատեմ անվիատ եւ անխօսջ ջանք եւ ճիշ թափուի,
եւ ի հարկէ Աստուծոյ յաջողութեամբ հետդիտեմ
աւելի լաւ արդիւնքներ կտեսնուին եւ պիտի տես-
նուին:

ուղարկեց, առողջութիւնը հարցրեց և
հրամայեց զան վանքը:

Վնացի եւ վանքն, երկար ժամանակ մը-
նացի առաջնորդի մօտ, երկար գրոյցներ
զանազան առարկաների վերայ անելէն յե-
տոյ հարցրեց, ի՞նչ է նպատակս, մնա՞լ
անդէն, թէ գնա՞լ:

Պատասխանեցի, ես ինքս ևս դեռ ևս չեմ
վճռած, այնու ամենայնիւ եթէ կը ներեկը՝
կը մնայի վանքումը, ըստ որում մտադիր եմ
անապատական կեանք վարել այսուհետեւ:

Սրբազանը ընդամիջելով խօսքս, քմծի-
ճաղ կցեց. ես շատ ուրախ կըլնեի՛ որ
այդպէս ջերմեռանդութեամբ ցանկանում
ես ապաշխարել, մանաւանդ սուրբ պար-
տաւորութիւն է ինձ մի մոլորեալ ոչխարը
ուղիղ ճանապարհ առաջնորդել, բայց
որդի՞ . . . բայց ժամանակս դառն է, երկիւղ
եմ կրում վաղը, միւս օրը չորս կողմի
մահմետականները լսեն քո ով լինելն, և
ժամանակն մեծամեծ վնասներ հասցնեն
մեզ, և հաւաստի եմ, որ դու ևս չհամա-
ձայնիս քո պատճառաւ մեք վնասներ կը-
րենք, մեր հացն ազգի հացն է, ինչ կը
պակասի վանքէն՝ եթէ մի անձն աւելի լինի
կամ պակաս . . . :

Աւրեմն, պատասխանեցի, ուրեմն սրբա-
զան, ինձ ճանապարհ ցոյց տուր, ես էս
տեղիանք պանդուխտ եմ, օտարական եմ
և անտեղեակ ամենայնի, ասան աղաչեմ,
հըր ապաքէն գնամ և որ տեղ կարելի է
ինձ դարձնուի, հանդիստ մնալ և
հանդիստ թողնել զիս պաշտպանողները:

Սրբազանը մտատանջութեամբ վայրկե-
նական լուութենէն յետոյ, աւելացրեց տար-
տամ համակրութեամբ. որդի, ամենայն
բանը պէտք է համեմատ ժամանակին կա-

տարած, ի՞նչ ասեմ կամ ի՞նչ խորհուրդ տամ էսպիսի անյողը յողը ժամանակումն, և լռեց:

Սրբազան, կցեցի լսած եմ որ Հայերի մէջին շատ ձգնաւորներ հրած են և այժմ ևս կան, ապաքէն ո՞ւր են նոքա և ի՞նչ միջոցով կարող եմ ես նրանց որոնել զանել:

Յանկարծ զարմացումն և մի ժպիտ նորա շթուներէն վերայ սահեցաւ և ապա յարեց. որդի, կրօնաւոր ձգնաւոր բաւերը արտաբերել զիւրին է, բայց նոցա պաշտօնը, պարտաւորութիւնները կատարել զործով դժուարին է, ամենադժուարին են, մանաւանդ քեզ համար, որ պատանեկութենէդ աշխարհիս փառքովը սնած և ապրած ես մինչև ցայսօր, և այժմ... այժմ կարծում եմ նեղացած այդպէս կը խօսիս, բայց երբ մտիւր էն կոչումը էն ժամանակն կրտսրջանաս... յետոյ... ահա այս է զլեաւոր հարցն:

Ո՛չ, ո՛չ սրբազան, վերաբերի մտքումս հաստատապէս դրած եմ և անշուշտ կատարելոց եմ:

Լա՛ւ, հարցրեց եպիսկոպոսը, միթէ կրօնաւորը կամ ձգնաւորը առանց կարգաւոր կարող է նրանց կարգը մտնել:

Ընդհանրապէս պատասխանեցի, ես ո՛չ միայն հայերէն, այլ և պարսկերէնն ևս քաջ զիտեմ, արդարեւ երկար միջոց հայերէնը զործ չեմ ածած, այսու ամենայնիւ ամենայն գիրք յուսամ վարժ կարդալ, Եպիսկոպոսը ձեռք պարզեց պատուհանէն մի զիրք վեր առաւ բաց արեց, տուեց ինձ կարդամ:

Ե՛յն ինչ ես սկսեցի զբարձր կարդալ մի երեսը, նա փազաբուշ դէմքով ու ու-

րախ ուրախ զիրքը ձեռէս առաւ, ասաց այժմ յոյսս հաստատուն է, որ բարինսպատակիդ կը հասնես, և իմ բերած պատճառները չէին կարող քեզ խոչընդոտն լինել, այժմ միջոց կը մտածեմ հասնես խորհուրդիդ, միայն պէտք է յայտնի ասած որ, էս խառը ժամանակը անհնար է քեզ վանքումս մնալ, այլ պէտք է զեղումը բնակուիս առ ժամանակ:

Ես զեղումն ուր մնամ սրբազան, պատասխանեցի, միթէ իմ ասանջականը ճիւրաբար կը հայթհայթէ իմ պարէնը...

Վորա համար, ընդհատեց նա զրոյցս, զորա համար, որդի դու մի մտածիր, ես կը հոգամ: Ենամիջապէս տիրացու Մարտիրոսը ներս կանչեց, հրամայեց նրան, տար խանին Սրապիոն պապի տունը, ասա նրան, որ խանին քո տանը հիւր պահէ, ու պատուէ և իւր որդւոց մինը առաքէ վաղը վանքը, հարկաւոր խօսք ունիմ նրան ասելոյ: Ուղղեց ինձ ապա խօսքը թէ, այսուհետեւ կարող ես հանգիստ մնալ, շատ լաւ կանես որ իսկ և իսկ գնաս տիրացուի հետ:

Ոտի կանգնեցայ, եպիսկոպոսի աջը համբուրեցի ու զուրս եկի խուցէն կամ լաւ ևս ասած առաջնորդարանէն, տիրացուի հետ գնացինք գիւղը, հասինք մի մեծ դռան առաջը, ուստի երևում էր մի ընդարձակ բակ, ուր մերձ տասն երեսայք էին խաղում, երբ մեզ տեսին շրջապատեցին մեզ, նոցանէ մինը, որ միւսներէն մեծ էր հասակով, առաջնորդեց մի սենեակի դուռն, ուր տիրացուն վայրկենաչափ զկայ առաւ, վերարկուի թեղանիքն ուղղեց, կուրծքը ծածկեց վերարկուով, մուրուսի փոշին մաքրեց, ինքեան համեստ կրօնաւորի վեճակ բերե-

լով՝ քանի մի անգամ հազաց, յետոյ ա-
հով-երկիւղով և ծանրութեամբ սենեակի
դուռը բացեց, ինքն ներս մտաւ ու ինձ էլ
պսեց ինքեան հետեւել: Արբէք չէի կարձել
որ, էսպիսի անշուք զնորումը գտնուէր պա-
րկաստանի կերպ մի երկար ու լայն դահ-
լեձ, զոյնզոյն ապակիներով լուսամուտ-
ներ ու փռուածքն: Խորասանի գորգերով
և չորս կողմը շարած բարձեր: Առսամու-
տի մօտը բազմած էր միայնակ մի կոյր,
սպիտակամուրուս, դառամութենէն կորա-
ցած մի ծեր, համրիչը ձեռքը, որ դռան
բացուելը զգալով՝ դուրսը բարձրացրեց
ու վեհութեամբ զուրը շարժեց-հարցրեց,
ով է, ո՞վ էս:

Պապի, սրբազանի տիրացուն եմ, պա-
տասխանեց տիրացուն:

Չը, հարցրեց ծերը, տիրացու ի՞նչ
կայ, հայր սուրբն ի՞նչպէս է, առողջ է,
մեզ մոռացել էր:

Աչ պապի, քաւ լիցի, կրկնեց տիրացուն,
սրբազանը ձեր ողջութիւնը հարցնելէն յե-
տոյ, էս օտարական պարոն խանը հիւր է
զրկել քեզ, և խնդրեց որ սա առ ժամանակ
ձեր տանը կենայ և քեզ ընկերութիւն անէ:

Օերունին երբ խան բառը լսեց, քանի
մի անգամ խան, խան կրկնելով գուն զոր-
ծեց ոտի վերայ կանգնել ու հարցնել մի
և նոյն ժամանակն, թո՞ւրք է:

Աչ, պատասխանեց տիրացուն, ո՞չ, այլ
հայ-քրիստոնեայ է, լսած կրկնիս, որ Շա-
հի բանակէն եկաւ:

Չա, հա, լսել եմ, դա՞ է, բարևով հա-
ղար բարի է եկել խանն, իմ երկու աչքի
վերայ է եկած: Օերունին էս խօսքերով,
զուրկն երերացնելով, ոտի վերայ կանգնեց
ու զէպ առ իս ու զղեց խօսքը թէ, արի խան,

մօտ արի, ձեռս բռնեց, մտերմութեամբ
սեղմելով իւր քովը նստացրեց ու հիւրըն-
կարութեամբ անկեղծ բառերով ինձ կը շո-
ղաբորթէր: Արբ երկուքս նստեցանք, ծե-
րունին ասեց, տիրացու դու էլ նստէ: Տի-
րացուն պատասխանեց, պապի, հեռի է
ճանապարհս, ինձ ներէ, սրբազանի մօտը
սպասաւոր չկայ, պէտք է ես շուտով վերա-
դառնամ վանքը: Օերը բարկացած կցեց,
ի՞նչ է, ուզում ես դարձեալ ինձ վշտացնէս,
էր քոյ հին սովորութիւնն է նազ անելով
տուն և դուս անել մեր սունը, էսքան
ճանապարհ եկած ես, կարելի է առանց մի
կտոր հաց կտրելոյ դուրս գնաս էս տանէն,
անսած կամ լսած ե՞ս, էդպէս բան եղած է,
ասում եմ քեզ նստէ, նստէ ես նախաձա-
շիկս արել եմ, ուրեմն էս պանդուխտ խանը
մի թողնի՞ր միայնակ: Եսի և իսկ ծերը գը-
լուխը հանեց լուսամուտէն, բութ ձայնով
գոչեց կրկին կրկին անգամ թէ, հարսնե՞ր,
հարսնե՞ր, նախաձաշիկ զրկէք՝ ինչ որ
Եստուած պարգևել է, և ապա երեսը շը-
ջեց դէպի մեզ հարցրեց, տիրացու նստե-
ցա՞ր, չէ՞ս գիտում որ ինձ հայհոյես լաւ է
քան զթէ նազ անես, էսքան ժամանակ
չընտելացա՞ր իմ բնութեանը: Տիրացուն
էլ համեստութեամբ ծալապատակ նստեց,
որպէս թէ ծերունեոյ աչքերը տեսնում էին
նրա շարժողութիւններն:

Ինչպէս ունակութիւն է ամեն ծերի հե-
տաքրքրութիւնն, նոյնպէս և սա, անյազ
հետամտութեամբ սկսեց տեղեկանալ ին-
ձանէ ամենայն ինչ երկարօրէն և մանրա-
մասնաբար: Ե վերջոյ լսելով երեւելի և շա-
րունակ պատերազմների մեջ լինելս, կցեց,
խան, ես էս միայն կարող եմ գնահատել
քեզ, ես գիտեմ ինչ ասել է քաջ զօրա-

կանի տարաբախտութիւնն, ինչ ասել է քաջ զինուորն առանց զէնքի, քաջ հեծեալն առանց երկվարի, զօրք առանց զօրազլի: Տեսնուեալս զիս երկու աջօք կոյր, կորաքամակ, զառամեալ ոմն, թերևս կարծում ես մեր զեղի անդերի, զաշտերի վերայ, անտառների մէջն եմ իմ օրերն անցկացրել ու էս հասակիս հասել ոչ ոչ աջօքիս լոյս, ես ես քո նման երկրէ երկիր, աշխարհէ աշխարհ, սուրբ մէջքօւմն, հրբայանք ուսիս, երկվարի վերայ մերձ քառատուն տարի զինուորուած, թշնամեաց զէմ պատերազմներ եմ մղած, երբեմն յաղթող, երբեմն յաղթուած. բանակների մէջ բայց ոչ երբէք արտաբէկ . . . : Եւ վայրկեանն մի վայելչահասակ պատանի նախաճաշիկը ներս բերեց, և ծերունին խօսքի թելը կտրեց: «Նախաճաշիկէն յետոյ բաւականին միջոց և ես պապը կորովի և ճարտար շարունակեց իւր անցած դնացած կեանքէն և հնպէս տեղն ի տեղն, որ երբէք չէր կորցրած իւր յիշողութիւնն: Արովհետև ուղեկիցս Մուքին միւս օրը առաւօտեան վերադառնալոց էր իւրեանց զեղը, վասն որոյ և խնդրեցի պապէն, ներէ ինձ զնալ նրա հետ զնաօ բարև անել և շնորհակալութիւնս մատուցանել նրան: Ապա պագսպարեղով ապսպարեց փութով վերադառնամ և մի և նոյն ժամանակն յաճնեց տիրացուին ողջունել զսրբազանն և իւր շնորհակալութիւնն յայտնել նրան որ օտար և պանդուխտ հիւր է առաքել իւր տունն: Արեկոյեան պահ էր ես վերադարձայ պապի մօտը, և կրկին կրկին մեր փոխադարձ խօսակցութիւնները շարունակուում էին, այն ինչ սկսեցին մի մի, երկու երկու անդորեայք վերադառնալ զաշտէն, և ընթրիքի ժամա-

նակն ժողովեցան պապի զահլեճը մերձ տառնաչափ մի միայն մորուսաւորներ, որոց մէջը կային չորս թէ հինգ հողի արևխառն մորուսով, իսկ մնացեալներն չափահասներ էին: Սորա ամենեքեան նրա որդիք և թոռներն էին: Սորա ամենեքեան ներս գալոյ ժամանակը կը ցանկային պապին բարի երեկոյ և զլուս կիջացնէին ու կը կանգնէին, մինչև պապը չասէր նստէք, չէին նստել: Եւ ինչ սեղանը ձգուեցաւ՝ ձեռնի ջուր բերին, միայն պապն ու ես լուացինք, իսկ նրա որդիք և թոռներն դուրս եկին, դուրս լուացին ու վերադարձան մի և նոյն համեստութեամբն բազմեցան սեղանի վերայ: Մի պատանի կանգնեց սեղանի ներքեի կողմը, ձեռները դրած դօտիկ վերայ, օրհնեց, զլուս իջացրեց, և ապա պապն ասեց համեցէք, նախ ինքն շօշափեց հացին և ապա միւսները: Առաւ մունջ հացկերութիւնը շարունակուեց: Օարմացայ որ ես անդ ոչ ցքի և ոչ զինի կային սեղանի վերայ: Հացկերութիւնը վերջանալէն յետոյ մի ուրիշ պատանի եկաւ, հացն օրհնեց ու սկսեցին ժողովել և ապա կրկին ձեռնի ջուր բերին, նախ պապն և ապա ես լուացինք, միւսներն մին մին դուրս զնացին, լուացուցան, վերադարձան իւրեանց տեղն նստեցան: Չկարծեմ թէ կէս ժամէն աւելի հացին յետոյ մնացին նոքա, այնուհետև մի մի, երկու երկու բարի զիշեր ցանկացին մեզ ու զնացին: Մնացինք ես ու պապն, և անկողններ բերին, զահլեճունն երկուքս քնեցինք:

Լոյսը չըծագած ոտների շունդն ու զլուրկիւնը և բարձր խօսելոյ ձայները ինձ զարթացրին, կարծեցի թէ նոր ի նորոյ բանակի մէջն եմ: Անհամբերութիւնով վեր

Թոայ անկողինէս, կամոց — կամոց զուռը
 փոքր ինչ բաց արի, նայեցի. Ի՛նչ, — եթէ
 ասեմ մերձ քառասուն երեխայք, աղջիկ
 տղայք, պատանիք, երիտասարդք, չափա-
 հաս տղամարդիկ և զանազան հասակի կնա-
 նիք, ընդարձակ բակի մէջը, մինը դէս, միւսը
 զէն է զնում, վազվազում, իւրաքանչիւրի
 ձեռքին մի մի անպորէի գործիք հերկելոյ,
 հնձկոյ, ձի, ջորի, աւանակ, եզն, կով,
 ոչխար, էծ, խաւն ի խուռն, մինի մէջքին
 կապոցով պաշար, միւսը նոր է կապում,
 այլ ոմն ձեռքին բռնած, մին քանիւր նըս-
 տած հաց են ուտում, մին խօսքով որպէս
 թէ երկրագործի բանակ է: Երբ էս տեսա-
 րանն լաւ լաւ նայեցի, միամտացայ որ, աս-
 պնջականիս որդիք ու թոռներն են, զնում
 են իւրեանց գործին, վասնորոյ վերադարձայ
 տեղումս պարկեցի, և ձիգ ժամանակ չտե-
 ւեց՝ զարթեց և Սրապիոն պապն, ձայնեց
 Եսրի, Եսրի: Ներս եկաւ մի 17—18 ամեայ
 պատանի, կոնքն ու երեսը ձեռքին, վայր
 զրեց էնդունք, նախ մեր անկողինները ժողո-
 վեց, զուրս տարաւ, վերադարձաւ նախ
 պապի և ապա իմ երեսը լուանալ պուեց,
 ու զուրս գնաց: Աէս ժամ ևս տեւեց, այն
 ինչ զրսի աղմուկն վերջացաւ:

Առա մունջ մեր աղօթելն վերջանալէն
 յետոյ բազմեցինք ու փոքր առ փոքր մեր
 զրոյցն կրկին սկսեցինք և ապա Սրապիոն
 պապն հաղորդեց ինձ իւր գերդաստանի
 կեանքէն ինչ ինչ տեղեկութիւններ, այս-
 ինքն, օրէն երկու ժամաչափ անցած նախա-
 ձաշիկ կանեմ, ասեց, կէս օրից փոքր ան-
 ցած ժամաչափ կը քնանամ, արևը մայր
 մտնելէն փոքր ինչ անցած կընթրեմ և մին
 ժամ անցած կը քնանամ: Երեկոյեան, ա-
 լելացրեց նոս, երկրագործներս այսինքն հանդ

զնացողները վերադառնալիս մին մին կամ
 երկու երկու դարով, ձէն ու ձուռն չի լինիլ,
 բայց առաւօտեան, մին ժամանակում զուրս
 զնալոյ համար, լսար էս օր արդեօք, ի՛նչ
 աղմուկ շփոթ է լինում մեր տանը: Բնթ-
 րիքիս, եթէ որդիներէս կամ թոռներէս
 հասին, հետս կընթրեն, թէ ոչ, ներսը մեծ
 բակ ունինք, ամառն էստեղ, իսկ ձմեռը
 մեծ սենևակ ունինք, էստեղ կժողովուին, մի-
 սսին աղամարդիկը կընթրեն, և տանեցիքը
 էլ առանձին նոցա ընթրելէն յետոյ կընթ-
 րեն: Աւերակէ օրերը համարեալ թէ բոլոր
 որդիներս և ամուսնացած թոռներս ու ծու-
 աւերս միասին որպէս նախաձաշիկ, նոյնպէս
 ընթրիք կանենք: Գերդաստանիս չափա-
 հաս անդամները թէ արու թէ էգ, իւրա-
 քանչիւր որ իւր առանձին նշանակեալ
 զբաղմունքն ունի, և էսպիսինները մինչև
 քառասուն հողի են: Աւելացրեց նա, այժմ
 տասն և ութն ամուսնացած որդիներ, թոռ-
 ներ և երկու էլ ծուռերս են: Աւթն որդիքս
 տասն և չորս արու զաւակներ ունին, որոն-
 ցից ութն ամուսնացած են. եթէ անասու-
 նաչափ արու կամ էգ անձինքներէ կը բաղ-
 կանայ գերդաստունս: Տարին տասներկու
 ամիս մեր տանը քիչ քիչ տասն օրորոց
 կօրօրուին շարունակ: Փռոք Աստուծոյ՝
 ամենեքեան էլ ոչ միայն ինձ, այլ և մի-
 մեանց հնազանդ են և իւրաքանչիւր որ իւր
 պարտաւորութիւնը լրագէտ կը կատարէ:
 Մի՞թէ Եբրահամ նահապետի կամ Յա-
 կոբ նահապետի որդիքը, թողուրք չեն ա-
 ձած, բազմացած՝ ինչպէս իմոնքն են: Մեծ
 պասին և շաբաթապասերին անընդհատ ա-
 մենայն օր, և լի օրերը, միայն երբեմն երբեմն
 շաբաթի օրը, իսկ կիւրակիքն անպատճառ
 ժամ կերթամ, վասնորոյ իւրաքանչիւր

շաբաթը մին թոռս կամ ծուռս, որ 8 և 9 10 տարի հասակ ունի, պարտաւոր է առաջնորդել ցեկեղեցիին կամ ուր որ գնամ և վերադարձնել: Դուրսի գործերն ինչպէս բաժանուած են արուների մէջն և իւրաքանչիւրն իւր արարմունքին է պատասխանատու, նոյնպէս ներսնային գործերն էլ բաժանուած են ութն որդուցս ամուսինների մէջն, և սրանք էլ երկու ամսէ երկու ամիս կը փոփոխուին կարգով, եթէ չեն հիւանդ կամ յղի, ընդ հակառակին իւրեանց հարսները իր կատարեն նոցա պաշտօնը: Էս է նրա համար ևս կարգադրած, որպէս զի կրնանիքը չտոխանձուին և մինը միւսի վերայ աւելի իրաւունք չունենայ կամ չասէ թէ իմ նեղութիւնը կամ շարչարուիլն աւելի է միւսների վերայ: Միանգամայն ասած, հերկ անողները, հողադները, հովիւները, նախրապանը, ջաղացպանը, բոյորեքեանք մերոնքն են և ոչ որ օտար մարդ չի խառնուի մեր մէջ, բաց ի հնձի ժամանակն, երբ կրպտասհի վարձաւորներ բանեք քանի մի օրով:

Եստեղ ևս ընդմիջեցի միայնակեցի խօսքն և խնդրեցի թէ կարելի է պատմէ ինձ Սրապիոն պապէն ինչ էր լսել նորա անցած դնացած կեանքէն և կամ ինչ պատերազմների մէջ էր նա պատահել և ինչ են նորա ասածներէն — պատմածներէն պահած իւր մտքունն, համառօտաբար ասէ ինձ, ևս գրեմ:

Միայնակեացն քանի մի բովայէ մտածելէն յետոյ ասեց, լսէ որդեակ. երբ Սրապիոն պապն խնացաւ ևս պարսկերէն կարգալ — զրել զիտեմ, խնդրեց իւր մի ուրիշ ծուռին, որ 12-13 ամեայ կը լինէր, պարսկերէն սովորացնեմ: Քանի մի օր երեխին

դաս ապա շարունակելէն յետոյ, առաջարկեց ինձ պապն, որ գրեմ իւր գլխին և կամ անցքերը, այս ինքն ինչ կուխների մէջ է պատահել և ում հետ: Ես ևս նորա պատմածներն քանի մի թերթ գրած էի սէն, որպէս զի յետոյ պարզագրեմ, բայց երբ յանկարծ էնանդաց զուրս եկայ այս ինքն փակցրին Տաթևէն, անկատար մնաց պապի նպատակն, և մի և նոյն սէն մինչև ցայսօր ունիմ, նոր եկած ժամանակս այս տեղ երբեմն երբեմն կը հանէի էն թղթերը, կը կարդայի, բայց շատ ատրխներ է չեմ կրկնած կարգալս, համբերէ, գնամ, որոնեմ թերևս գտնեմ, բերեմ, կարգամ մօտը, դու ևս հասկանումես պարսկերէնը, կարող ևս հայերէն նրա թարգմանութիւնը գրել:

Ես խնդրեցի թէ կարելի լինի, նոյն սէր տայ ինձ, տանեմ քնակարանս, կարգամ հանդարտութեամբ ու թարգմանեմ: Պատասխանեց միայնակեացն, շատ դժուար ընթեռնել պէտք է լինի, որովհետև շատ տեղ ջնջածներ և կրկին գրածներ կան, ըստ որում պապը հետզհետե կաւելացնէր յուշ բերելով ինչ ինչ անցքեր, այսու ամենայնիւ գնամ բերեմ տե՛ս:

Քարանցաւի ներք կար, որպէս ասած եմ, մի այլ փոքրիկ մութը քարանցաւ միայնակեացը ներս դնաց, էն տեղաց դուրս բերաւ մի մաշած, ծակծակ հինացած կրտաւէ կապոց, որի մէջէն հանեց դեղնացած, բորբոսնած, ճլտած, դժլտած, խառն է խուռն թխթեր, որոնեց՝ որոնեց, նոցա մէջէն որոշեց քանի մի թերթեր, նոյնպէս դեղնացած, կեղտոտ, ուր ուրեք ջնջած մրտած, աւելացրած, արգարև դժուարընթեռնելի, ինքն լուռ մունջ նայեց, նայեց, իսկզբանէն ցվերջն կարդալէն յետոյ, որպէս

Թէ սերտեց, և յետոյ անց, ևս կարդամ զո՛ր զրէ: Եւ ևս սկսեցի զրի անցուցանել ներքոյ գրեանքն:

« Հայոց թագաւորութիւնը ընկնելէն յետոյ, մնում է (Մրցախումբ) Վարաբազումը: Միւնեանց ցեղն, երկար ժամանակ ամփոփուած իւր երկրի անմատչելի յերանց մէջն: Ի վերջոյ դրացի իշխողները նրանէ ևս կողմէն ևն կողմէն փոքր փոքր հողեր կտրելով, մնում է նորա ձեռին միայն Միսիանէն ց Աեոզ-չայի (Տովակը Պեղամայ): Տարաբախտութեամբ Միսական այս ինքն Միւնեաց ցեղը դերդասանների անդամներէն շատ անհաստատ, խաբերայ, խարդախ մարդիկ են ծագում, որոնք ոչ թէ միայն իւրեանց մէջը կազ ու կուխներ են յարուցանում, մին զմինի հետ ուխտադրութիւնում, մին զմինի ձեռէն իշխանութիւնը խլելով, այլ և երբեմն Վարսից, երբեմն Վրաց, երբեմն լեւնականաց և երբեմն Օսմանցեաց կողմնակից լինելով, առաջնորդում են ևս ևս ազգերը աւերել իւրեանց հայրենիքը: Երբ դրացի ազգերի մինը կը հզորանար, կը զիմէին նրան, փոքր ժամանակ նրան հնազանդելով կրկին կ'ապստամբէին, կը դիմէին միւսին որ հզորողոյնն էր: Այսան որոյ մինչև ցայսօր Հայերի և Վարսիկների միջէն հասարակաց առած է, երբ մի վէճ կերկարանայ, կասն, է՛հ, է՛ր էլ Միսիանցեոյ վէճ դառաւ:»

« Չգիտեմ երկու թէ երեք հարիւր տարի յառաջ, որպէս յաւանդութենէ լսած եմք, Վրաստանի իշխողները տեսնելով նոցա անհաստատութիւնն և ուխտադրութիւնն, մանաւանդ նոցա միանալը վայրենի ցեղերի հետ և յարձակուելն իւրեանց սահմանափակի զեղերի վերայ և աւերելն, էս Մի-

սականաց անդամներէն մին քանիսը, հրամանաւ Վարսից Շահերի, զաղթել են տարել Վրաստանի սահմանազխին Վաշաչըղ (Խմէրէթ) ասած սահմանների մօտերքումն մեծ անտառի մէջը բնակացրած, որպէս զի մի կողմէն Վրացիք ինքեանք, միւս կողմէն Վաշաչըղները զսպեն նրանց: Մի և նոյն ժամանակն երկու հողի էս սերունդէն իմանալով Վրացի իշխողների նպատակը, գաղտնի զնում են խորին պարսկաստունը, ուր դանելով Հայոց ազգէն հին հին ժամանակները զաղթուած և մահմեդականութիւն ընդունած երեւելի նախարարների սերունդներէն մնացած Ռըշտունիք (Քելիդիէ) և Ջուանշիր անուամբ, ծանօթ անում են նրանց հետ և ազգականութիւն անում: Էս երկու նախարարական ցեղերը շատ երեւելի և պալատական որևարներ լինելով Վարսից շահերի դրանը, կարողանում են Միւնի ցեղէն փախստական անդամներ և ևս յառաջ քաշել և մեծամեծ պաշտօնների տէր շինել: Աոցանէ մինը, էս տարի (1700) սկզբներումը Ռօստոմ խան անուն, որպէս բախտախնդիր վերադառնում է Միսիան, նպատակաւ տիրելոյ իւր հայրենիքն կամ թէ նորոգէ իւր պապական իշխանութիւնը, բայց երկրացիք չմոռացած էս սերունդէն ստացած վնասները, չեն ընդունում նրան որպէս իշխող ցեղեց ծագուած, վստանորոյ և նա քանի մի տարի անտանդանիան շրջմովի երեւալով, վտարանդի զմնում է վրաստանումը գաղթուած իւր ազգակիցներին, որոնք նոյնպէս չնայելով նրա երեսին, պարտաւորվում է վերադառնալ Միսիան, որդուում է Հայ-ժողովուրդը մէկ կարողանում է համոզել նոցա, որպէս զի զիմեն վրաց թագաւորին ուսրա՛ն օգնութիւն կը

ընդդէմ Պարսիկ խաներին ապստամբուին: Էս խաները էն ժամանակը ամենայն ուրեք ինքնազուլու կիշխէին և շատ կը նեղէին հայերը, երբ և Նֆղանները տիրել էին Պարսից գահը և սրանց օրինաւոր Շահը, Շահ Հիւսէյն անուն, բանտարկուած էր Նսողահան, իսկ նրա որդի Շահ Թամազը շրջում էր, էս կողմն էն կողմն հնարք գրտնել, զօրաժողով լինել առ ի ժառանգել հայրենական Աթոռը:

«Ռոստամ խանը (մահսէր) շրջաբերական ժողովելով Պարաբաղի երեւելի մեղքներէն և ժողովուրդէն, որպէս ինքն պատգամաւոր, տանոււմ է ներկայացնում վրաց թագաւորին ու միջնորդներ ձգում: որպէս զի զօրք ուղարկէ օգնել նոցա և զինքը զօրավար կարգէ: Բայց վրաց թագաւորն քաջ ճանաչելով Մխիան (այժմ Յիցիան կամ Յիցիանով վերակոչուած) իշխանների բարք ու բնութիւնը, մանաւանդ իւր նախնիքների կրած նեղութիւններն էն ազգատոհմի նախահաւներէն, բայց ի բաց մերժում է նրա առաջարկութիւնը և նշանակում է մի քաջ անձն Բաւիթ բէկ անուն, Երցախի կողմերէն զազթուած երբեմն վըրատտուն ու երկար ժամանակ ծառայած իւրեանց արքունիքի մէջին, վաստակած փառք պատիւ և պաշտօն զօրագլուութեան:»

«Հօրս հայրը Սրապիոնն ունենում է երկու որդի, երեցն՝ Նուրի Զան, կրտսերն Պապ անուն: Էս Նուրի Զանի երեց որդին ևմ, անունս պապիս անուամբ Սրապիոն կոչուած, և թէ ոմանք զէս Պապ ևս կանուանէին ի պատիւ զառամութեանս: Մինչև Բաւիթ բէկի գալը, մեռաւ Սրապիոն պապս, և նրան յաջորդեց հայրս, որ

քանի մի տարէն յետոյ զիշերը իւր տան մէջ սրախողող եղաւ իւր թշնամիներէն: Հօրս յաջորդեց մեղքութեան պաշտօնիւ Պապ հօրեղբայրս:»

«Բաւիթ բէկի առաջին զենուորակիցներէն մինն էր հայրս, երբ 50—60 միայն մարդով զնացին Մխիան զիւղն և վանեցին անդէն Պաքա—Չօրու ասած ասպատող քուրդերը: Հայրս էր, որ ամենից առաջ զնաց Տաթևու առաջնորդի մօտը պատգամաւոր Բաւիթ բէկի կողմէն ու զնա համակելով առաջնորդեց Բաւիթ բէկի մօտը, Շահիւր գեղոււմ մին զմինը տեսին, ծանօթացան, խորհուրդ արին, և յետոյ Առաջնորդի խրախուսելովը մինչև 400-500 քաջ երիտասարդներ զբահաւորուած ժողովեցան ու սրբազանն նոցա զրօշն օրհնեց ու օծեց: Նոցանէ մինն էլ ես էի, ես ծերացած այժմ ևս երկու աջք կուրացածս, և փութացինք՝ զնացինք յաղթեցինք զինի գոռ պատերազմի, էն հաւատարիս Զուանշիր ցեղը, որ միշտ զհայերը կասպտակէր, և Մխիթարն՝ էն քաջ՝ ամենաքաջ տղամարդն ունենալով մեզ զօրավար: Ե յնուհետև էս քաջ անցաղթելի մարդն մեր երեսը պարզ հանդիսացրեց աշխարհքի և մեր ընտանեաց առաջէն: Բոլոր նորա ստորադրեալքս նորա օրէնովը և զլսովը կերդիւնք, նորա ամեն մի խօսքը մեր համար պատգամ էր մեր արիւնը չէինք խնայում նրա համար, նրա խրոխտ, բայց ամօք՝ քաղցը բնութիւնն՝ սրտազրաւ դէմքն՝ թիկնաւէտ և բարձր հասակը, պատերազմի մէջը թուր խփելը, անվեհեր և անշփոթ մնալն, անձնամատոյց լինելն ամեն վտանդի մէջ, անպատմելի են: Շուտով միացաւ մեր հետ հնարագէտն Թորոս՝ Չավընգուրի իշխանը

(որ նոյնպէս սիրելի էր զօրքին), միասին ասպատակեցինք Չահուէի Աւրղըբատ և նրա չորս կողմի ղեղերը: Արանէ յետոյ Վաւիթ բէկի հզօրանալն երբ հաշակուեցաւ և միամտացան ամենքեան, որ նա կարող է գործ անենել այնուհետեւ, վասնորոյ մե- լիք Փարսաղանն և նրա փեսայ Տէր Աւե- տիք քահանէն և փոքր Արնեաց աշխարհէն և ևս քաջ մարդիկ եկին միաւորեցան նորա հետ, յորմէ չորս կողմի խոաները զգա- լով որ Հայերի զօրեղանալը գնալով-գնա- լով սաստկանում է և անպատճառ ժամա- նակաւ վտանգաւոր է ինքեանց, վասնորոյ և միաւորեցան առ ի զսպել հին ժամա- նակէ ի վեր ինքեանց հազարակալ մի ժո- ղովուրդ:

«Մի զատկի օր Չավընդուրի դրացի իշխողները մերձ քսան հազար զօրքով մի- տաղիր էին եղած զաղանի յանկարծ յար- ձակուելի Հայերի վերայ ու մին հարուա- ծով վերջ տալ նոցա աստատարութեանը՝ կարծելով թէ՛ Հայերը զատիկ օրը կամ արբած կը լինին կամ ցրուած իւրեանց տները: Հնարագէտն թողոս էս նրանց նպա- տակը ծածկաբար յուսմ էլ շրտեսներէն, վասն որոյ զանխուլ պատրաստուեց նախ քան զնոցա խրտիին, ինքն յարձակուի նոցա վերայ: Աւստի Հայոց զօրքը երկու մասն բաժանեց նա և քաջ ծանօթ գոյով ամեն կիրճերին, ձորերին և ինչ տեղաց թշնամ- եաց յարձակուելոյն, ուստի ամեն դժուար անցանելի տեղերումը կանգնացրեց, կարգեց մի մասն զօրքին իսկ միւս մասը ժողովեց երեկոյեան թաթախումի օրը մին դիւր ու տավարակ դաշտի վերայ, ինքը բարձրացաւ կանգնեց մի քերցի վերայ, քարոզ տուեց զօրքին էսպէս. «եղբայրներ, մօտ չորս հա-

րիւր տարի է, մեր թագաւորութիւնն կորց- ընել ենք, մէք դերի էինք մնացած մեզ շըր- ջապատող մահմետականների ձեռին, որոց ահա քանի մի ամիսէ ի վեր մի զկնի միոյ յաղթում ենք նրանց, որոց մեր հայրերը, պապերը, պապի պապերը անյաղթելի էին ճանաչել: Աւա մտածեցէք եղբայրներ, ի՞նչ էր նրանց էնպէս ճանաչելոյն և ի՞նչ է պատ- ճառն մեր յաղթելոյն: Այժէ մէք մեր մէջն սիրով չմիաւորվէինք, մի սիրտ, մի հոգի, մի խօսք՝ և միաբանութիւն չունենայինք, մեր պապերի նման մեր ևս նոյն թշուառու- թեանց մէջը կը մնայինք, բայց միաբանուե- ցանք, մին դմինի հնազանդուեցանք, նրա համար էլ սուրբ Խաչն մեզ յաջողեց ու ամենայն տեղ էլ յաղթեցինք: Եղբայր- ներ, բաւական էր որքան էս անօրէններն մեր պապերին հրամայեցին թէ մեր ձիանց երասանակը բռնէք, մեր ձիանց ուղանկո՞ւն կընեցէք, մէք հեծենք, այսուհետև մերն է ժամանակն նրանց հրամայենք՝ թէ որ միախորհուրդ համաշունչ մնանք, ինչպէս կանք: Բաւական է որքան նրանք մեր ա- ըրիւն քրտինքով վաստակածները խելցին մեր ձեռնէն, մեր տղերքը, մեր աղջկերքը, մեր կնանկերը մեզանէ յափշտակեցին կամ զերի տարին, մեր հօտերը, նախիրները, ջոկերը քշեցին, այսուհետև հերթը մերն է, յու- տացէք էս հրաշալի սուրբ Յարութեան օրին և քաջութեամբ կռուեցէք, հրեշ- տակները մեզ կօզնեն, մեր սուրբ նախնեաց աղօթքը հասել են երկինքը, ընդունելի են եղած Աստուծոյ աթոռի առաջը սրբոց Արդանանց նախատակութեան բարեխօ- սութեամբն: Ասածներիս ապացուցութիւն է, որ շատ անգամ մեր թշնամիքն մեր ա- ռաջին փախան ամօթով, փորձեցինք որ

նրանց թուրքի բերանը բթացել է, էլ
 առաջուան նման սուր և կտրուկ չէ: Աս-
 առած նրանց հակառակ է իւրեանց անի-
 քառութիւնների համար, յուսացէք Յի-
 սուսի Քրիստոսի մեր Աստուծոյ սուրբ
 Յարութեան՝ և ամեն բան կը յաջողե-
 կը զօրանանք: Ամէն սուսացէք եղբայրներ:
 Տօղորեքեանն էլ միաբերան աղանդակե-
 ցինք երեք անգամ՝ Ամէն, Ամէն, Ամէն:
 Արանէ յետոյ Տէր Աւետիքը թեթե ժամ
 ասեց, պատարագեց, բողոքիս հաղորդեց
 սուրբ արեան և մարմնոյ խորհուրդէն, պա-
 սերնիս ձուով բաց արինք, ոտի վերայ ընթ-
 րեցինք ու զիշերէն շաւ փոքր անցած շորս
 կողմէն յարձակուեցանք թշնամեաց վերայ,
 որոնք անկարգ և միամիտ կային բանակուած:
 Թշնամիքը մեր գոռալէն գոչկլէն էսպէս
 դարհուրեցան և շփոթուեցան, որ չկարո-
 դացան իւրեանց ղէնքերն ուսերնին՝ ձգել
 վասնորոյ և սկսան խառնուել ու փախչել,
 մէք էլ որքան կարողացանք կոտորեցինք, և
 նոցա մտացեալ փախածներն, մեր զօրքի
 միւս մասը որ կիրճերումն կը հսկէին, սոցա
 սրերի կերակուրն եղան: Հրաշալի սուրբ
 Օտտիկը մեր համար կրկնազատիկ եղաւ:
 Մեր ձեռք բերած աւարը մեր մէջ բաժին
 բաժին արինք, վանքի մասն էլ ուղարկե-
 ցինք ու խնդրեցինք որ առաջնորդն մեզանէ
 քանակաւու հաստակներ եղածներն հո-
 ղիքը յիշէ սուրբ պատարագի մէջն: Երկ-
 րորդ օրը Թորոսը մօտիկ գեղերի մէջ բնա-
 կուած թուրքերի մօտը պատգամաւոր ու-
 զարկեց թէ, մօլլէքը դան պատկերագրի ա-
 պարեգե մէջն սարանուածներն զիսկները
 թաղեն: Իս պարսպորեոյ վերայ մօլլէքն ու
 փողովորը կանկածել էին, բայց պատ-
 գամաւորը երդմամբ հաւատացրել էր

վասն որոյ մօլլէքն էլ ձեռներումն կ'ըս-
 մինչև քսան հողի ներկայացան: Թորոսին,
 կրկին անգամ էս խօսքերը նրանէ լսելն
 յետոյ, գնացին իւրեանց հաւատամիցները
 թաղեցին: Աորս համար Թորոսի անունն
 և ևս փառաւորուեցաւ չորս կողմի մահ-
 մատականներն մէջն, քան որու մինչև էն
 օրն էսպիսի մին հողեօր ծէսի թոյլտու-
 թիւն պատերազմն յետոյ, մինչև անգամ
 իւրեանց հաւատամիցների մէջը, ոչ լսուած
 էր և ոչ տեսուած:
 Մի քանի շաբաթ անցաւ չանցաւ,
 լուր բերին թէ բոլոր միջիքները հաւաքուած
 են իւրեանց զօրքովը Ղաւթիմ բէկի մօտը:
 Ախորժեկ է ինձ միտ բերել էն նուիրական
 օրը, երբ ամենեքեան ուրախուրախ կերթա-
 ցին, որովհետեւ մի հողի միանձն էին եղած
 ամենեքեան: Ժողովուրցան Մեկքիները
 ինչ խօսեցին իւրեանց մէջը՝ ոչ որք յայտնի
 չեղաւ, բայց երորդ օրը զօրքը առաջնոր-
 դեցին ղէպի Օւելու ամուր բերթն, որի
 իշխոցն էր կրօնամոլ Հիւսէ յն խան անուն,
 բողոք Հայերիս թշնամին: Մերըը պաշա-
 րեցինք առաջն օրը քանի մի ապարդիւն
 յարձակումներ եղան, խի կրկնորդ օրը
 արիւնքուաւ մարտը սաստկացաւ, երկու
 կողմէն էլ յամառուած սուրը ձեռներումը
 մին զմիւր կը կտորէին, պաշարեալքը քա-
 նի մի անգամ յուսահատութենէ դուրս
 թափուեցան, հարուած տնէին Հայերին,
 թէ և ինքեանք էլ և ևս սաստիկ հարուած
 կրեցին, բայց չը փոխուեցաւ մարտի բախ-
 տը: Լուր հասաւ Հայերին թէ պաշա-
 րեցող զօնութիւն է պալոց, վասնորոյ երրորդ
 օրը Տէր Աւետիքը զգնատարուեցաւ,
 քահանայական սաղաւթըն զիսին, աջ
 ձեռումը սուրը՝ ձախ ձեռումը սուրբ Խա-

չը՝ Մխիթարն էլ քամակին ընկած, որոց էլ հեռուում էր զօրքը, յարձակուեցանք բերթիէն կողմէն, որ յուսալի էր շուտով առնուի: Մեր նպատակը պատկուեցաւ, սաստիկ յարձակումէն յետոյ կէս օր էր կատարեալ յաղթութեամբ մտինք բերդն ու արեցինք: Մերձ հինգ հարիւր մարդ մեզանէ էն երկք օրումը նահատակուեցան և 3000 նոցանէ: Նոցա կնանիքը, երեխեքը գերի մնացին մեր ձեռքումը և նոցա կայքն էլ արեցինք: Պատերազմը վերջանալէն յետոյ Տէր Աւետիքը յորդորում խրատում էր մեզ խնայել պարտեախներն կնանիքն, բայց ով էր նրա խօսքին կապիւ ժամանակն նայողն, նոյնպէս Մխիթարն և Թորոսն թոյլ տուին թշնամիներէն շատերը փախչեն, ազատուին մեր ձեռնէն: Վաւիթ բէկը միւս օրը հրատարակեց բերդի մէջ երեխեքանց և իզական յիզի ազատութիւնն, ուր կամին զնան, իսկ նոցա կայքը, ինչպէս աւար պարգևեց զօրականներն, ոչ ինքն և ոչ մեկերն ըր մասնակից չլինելով: Չօրքն էլ ըստ սովորութեան մասնաբաժին ժամու պատարազին հանելէն յետոյ, մնացեալն բաժանեցին իւրեանց մէջը: Պրքան գնում էր, էնքան չայերը զօրեղանում էին թշնամեաց վերայ ոչ միայն կստեղ-էնտեղ պատահած մանր-մուկն պատերազմներն, այլ և երեւելաց մէջն ևս, և հուրն ու սուրը մեր ձեռքումը դատում էինք նրանց, աւերակ էինք դարձնում նոցա զեղերը ու գրաւում նոցա հօտերը, ջնկերը և նախիրները: Հատ անդամ Թուրքերը վատութեամբ անձնատուր էին լինում և մերնքն նոցա խնայում էին, բայց կրկին նոքա խլրտում էին ու միանում իւրեանց հաւատակիցներն հետ, ժխտում խօստու-

մրն երդումն, և կապիւ նոցա հաւատադրութիւնն աւելի ևս էր ստիպում զչայերը անխնայաբար ամենայն ուրիք սրոյ ճարակ աւել զնոսա և նոցա կայքը յափշտակել: Պրոտնայ բերթն իւր ամբողջեամբն որջ էր եղած թշնամեաց համար, և յաճախ էն տեղաց զուրս էին գալիս յարձակուում չայերն զեղերի վերայ, պատակում ու զերազառնում, պատրապարուում բերդի մէջին: Վանի մի շաբաթ ամենայն օր շարունակ յարձակում էինք էն բերդի վերայ, բայց չէինք կարողանում արեւել, մինչև յանկարծ Օսկականարդի կիրակի օրն երբ բերթի պարիսպի մի կողմը բաւ, որպէս թէ Աստուծոյ ձեռն էր, որ զչայերը կօզնէր աներեւութաբար, մեք ևս միահաղոյն դոյթ տուինք ներս մտինք բերդը, սկսեցինք արատողը անել զէնք կրող տղամարդիքը, իսկ նոցա կնանիքը երեխեքն ողորմազին ազաչում էին խնայել ինքեանց: Երգարե մեր մե լեքները խղճալով նոցա թոյլ չէին տալիս մեզ կոտորել, բայց շատ քիչ զօրական կար նոցա յորդորանացն և արգելչոյն հնազանդողը ըստ որում թշնամիքը մեր հաւատի թշնամիքը մեզանէ շատ ոչխար, եզն, ձի էին յափշտակած ու տարած Արասի միւս կողմումն իւրեանց հաւատակիցների մօտ ու անց թողած կամ վաճառած: Պրոտնայ բերդը առնելն էր մի փառաւոր յաղթութիւն, որիցը ծագեց չայերի մտքումը զանապան դադափարներ ուստի ժողովեցան բոլոր իշխանները, մեկերները և երեւելները, խորհուրդ արին ու հաստատեցին զՎաւիթ բէկն իւրեանց վերայ

զլեաւոր մեծաւոր (սարդար), իսկ զմիւս
 մեկիքները կամ զօրք ունեցողները զօրա-
 վար անուանեցին, զոր օրինակ Մխիթար
 զօրավար, Թորոս զօրավար, Փարսադան
 զօրավար և ըն. և խօսք կար թէ, մտադիր
 են նշանակել զՎառիթ բէզը թագաւոր
 և օծել Տաթևի վանքումն և թէ ըս-
 պասուամ են Վրաց թագաւորէն դեսպան
 գայ և թագ բերէ: Տարաբախտաբար էս
 զօրավարութեան կոչումը շատերը վշտաց-
 րեց, ըստ որում ոմանք ինքեանց արժա-
 նի համարելով էն կոչմանը և էն չնտա-
 նալոյ համար սրտնեցան ու ռխակալ և
 դան, նախանձեցին, ուստի և իւրեանց
 պատիժը շուտով կրեցին: Ես զժողհնե-
 րէն մինն էր և կարող եմ ասել զլեա-
 ւորն էր իմ հօրեղբայր Պասին, որ ամե-
 նայն պատերազմի մէջ իւր երկու հազար
 զօրքովն ներկայ եղած և ամենայն ուրեք
 քաջութեամբ հանդիսացած, մանաւանդ
 մերեալ ընելով թշնամեաց արիւնովը,
 նոցա իւր եղբայրը խողխողելոյ համար,
 լայն — երկար վաղակաւորը ձեռումը կը-
 մտնէր պատերազմի ասպարէզը թիկնոցով,
 անկապայ, երկաթազամ զրահաւորուած
 անխնայ կկոտորէր, շատ անգամ էր պա-
 տահած, որ աչքերը արիւնով լիքը՝ չէր
 որոշել չայ է թէ թուրք, անկանազանա-
 բար պատահողը կվերաւորէր, եթէ չայն
 չասէր թէ ես չայ եմ, մինչև անգամ
 թուրքերը նրա բնութիւնն իմանալով,
 սովորած էին բառս չայ, կգոչէին չայ
 եմ չայ: Ահա սրա համար էր որ թուր-
 քերը Պասի հօրեղբօրս կվերակոչէին Բաբը
 զհաննաճ, այս ինքն զուրն զժողիքի, ինչ-
 պէս էլ Թորոսին կասէին Թորոս և Մխի-
 թարին իւրոյ, այս ինքն վարազ կամ խող:

Թէ և ամիսնանկեացը յօժարութեամբ կը
 շարունակէր կարդալն իւր դրածը, բայց
 ես յորձած էի, ուստի խնդրեցի էլ չչա-
 րունակէ, և էլ թխթիւս ժողովեցի, մը-
 նաս բարև ասի դուրս եկի, զնացի վանքն,
 և միւս օրը վաղքաջ ընդ առաւօտն ելի
 վանքէն, հասայ միայնակեացի այրն: Ահա
 նորա կարդացածներն շարունակութիւնն
 են յետագայքս: Ես արդ յարմարեցի իմ
 մէջս արժանի գրագրէն զհայրս իմ
 մէջ Բարդուշատի իշխող Պաթ - Ալիխա-
 նը, որ մեզ շրջապատողներէն ամենազօ-
 րեղ թուրքն էր, մինչև էն ժամանակը չե-
 զոք կար, ոչ մի կողմին չէր հակեալ, բայց
 լսելով չայերի ամեն տեղ զերազանցու-
 թիւնը Մահմետական — իւր հաւատա-
 կիցներէ վերայ, մամրուում էր և պատ-
 ճառ որոնում պատերազմ բանալ սահ-
 մանակից մեկիքներն մինի հետ դունէ ու
 պղտոր ջրումը ձուկն որսալ: Սա ունէր
 արօտատեղեր, որոնք հարիւրաւոր տարի-
 ներէ հետէ կպատկանէին չայերին, բայց
 քանի մի տարիէ հետէ բռնութեամբ ինքը
 տիրապետած էր և ստանալով չայերիցը
 նախ փոքր ինչ և ապա սակաւ առ սակաւ
 անելացնելով զինքն թոյլ կտար նոցա
 մակաղել իւրեանց հօտերը: Ես անդամը
 չկամեցաւ Պաթ - Ալիխանը տալ չայե-
 րին արօտատեղիքն վարձով անդամ, ու-
 ընմն և նոցա հօտերը պէտք էր պատ-
 կէին քաղցածութենէն ու շոքէն, որով
 հետէ թէև հեռի տեղ արօտներ ևս կա-
 յին, բայց էն տեղրանք խաշիք տանելը
 կնշանակէր թշնամեաց կերակուր անել,
 ուստի Թորոս զօրավարը Չամբաղուրէն
 պատգամաւոր զրկեց նրա մօտ, ասել, ար-
 ութ չտալ երկու զրացի ժողովուրդի մէջ:

ըն խոտորութիւն ծագէ, մի և նոյն ժամանակն էլ առաքեց ամեն տարուայ վճարուած վարձը: Բայց Փաթ - Ալին բացէ ի բաց մերժեց էս առաջարկութիւնը, վասն որոյ և Թորոսը հարիւրաւոր ձիււորներ և էնքան էլ հետեւակներ ուղարկեց հովիւների հետ, որպէս զի բռնութիւն գործածուի Փաթ - Ալի խանի կողմէն, նորա էլ պաշտպան հանդիսանան հովիւներին: Փաթ - Ալին լուրս հասնելէն յետոյ, առաքում է իւր եղբոր որդւոյ հետ նոյնպէս հարիւրաւոր ձիււորներ՝ առ ի արտաքսել արօտատեղերէն Հայերի հօտերը: Եւ երկու դաս հակառակորդների մէջ նախ փոքր յարձակումներ է պատահում, հետզհետէ սաստկանում է դառնում հասարակական պատերազմ ու սպանում է Փաթ - Ալիի միակ եղբոր որդին, թերևս իւր Փաթ - Ալիի թերադրութեամբ, որպէս և շատերը կհաստատեն, իբր ժամանակաւ իւր մահուանէն յետոյ՝ իւր որդին տիրապետէ իւր իշխանութիւնն առանց ո՛ր և իցէ հակառակորդի, բայց յայնման՝ ներկայումը առ երևոյթս ցոյց տար թէ ապագայ պատերազմի պատճառն էր իւր ազդականի մահն, որպէս զի՝ մահմեական իւր հպատակներն և ևս մոլեռանդութեամբ մարտնչէին ընդդէմ քրիստոնէից: «

Այնուհետև Փաթ - Ալին իւր վիճակն զօրաժողով եղաւ, Երասխի միւս կողմէն էլ բաւականին զօրք վարձեց, մերձասան հազար զօրքից ստուար բանակ կազմեց յարձակուեց Չամչուրի վերայ, որպէս թէ վրէժխնդիր լինել Հայերիցն եղբոր որդւոյ արիւնի համար: Թորոսն արդէն տեղեակ էր նրա ամեն շարժանցը, վասն որոյ և լուր էր սուլած Պապ հօ-

րեղբորս՝ շտապով իւր զօրքը ժողովէ զընայ միանայ նրա հետ: Թշնամեաց զօրքը շատ աւելի էր քան զթէ Հայերինը, բայց նոցա մեծ մասն հեծելազօր էր, ուստի և Թորոսը գուն գործեց պատերազմը չսկսել դաշտի վերայ, այլ ձորերի մէջ և լեռանց կողքերումը, ուր հեծելազօրը կանախանանար: Եւ նպատակաւ էլ կարգադրեց որ, ինքն իւր զօրքով սկսէ մարտն ու փոքր ինչ պատերազմելէն յետոյ փախուստ տայ, մտնէ ձորի մէջն, իսկ Պապը յանկարծ միւս ձորէն, որ շղթայած էր նորա հետ, անակնկալ թագստենէն դուրս գայ իւր զօրքովը, ընդհատէ թշնամեաց բանակի մին զմինի հետ հաղորդակցութիւնն: Այն ինչ թուրքերը հալածեցին զՀայերը և անդուշութեամբ մտին ձորը, Թորոսը ըստ հասարակեալ սովորութեան հրամայեց հարկանել թմբուկը և հնչել փողը: Մարաը նորոգեցաւ՝ երբ և ինքն իւր զօրքովը վերադարձաւ, ու մի և նոյն բովայնին էլ Պապը լսելով թմբուկի և փողի ձայնը, յարձակուեցաւ ի թաղուստի կացած ձորէն թշնամեաց վերայ, որոց առաջապահ զօրքը բաժանելով վերջապահէն, որ ըստ մեծի մասին վարձուած էր և ձորի անձկութեան համար սողուած, որպէս թէ կքայլէր, ուստի և շուտով ի փախուստ դարձան և Հայերը բարեպատեհ միջոց ունենալով սաստիկ հարուած տուին նոցա, էն անսխիճան՝ որ հաղիւ թշնամեաց կէսը կարողացաւ ազատուիլ: Աւարի կողպուան էնքան շատ էր՝ որ հաշիւ չկար: Եւ երևելէ յաղթութեան լուրը Թորոսը շուտով հաղորդեց որպէս Ղաւիթ բէկին, նոյնպէս և միւս զօրավարներին: Երկրորդ օրը աւարը բաժանելէն յետոյ բոլոր զօրքը

միաբերան, մի հողով, մի սրտով զոչեցին Պապն ևս պէտք է զօրավար անուանուի, որովհետև նա իսկութեամբ և ճշտութեամբ կատարեց Թորոս զօրավարի կարգադրութիւնն: Թորոսն էլ խոստացաւ առաջարկել Վաւիթ բէկին և միջնորդել կատարել նոցա խնդիրքն»:

«Միւս զօրավարները լսելով էս յաղթութեան լուրը, կժողովուին Վաւիթ բէկի մօտը, ուրախակից լինել, և ահա կը ժամանէ և Թորոսի նամակը Պապի զօրավարութեան մասին: Նոցա մէջն էս առարկայի վերայ ինչ խորհուրդ կանեն, Աստուած դիտէ, միայն թէ քանի մի օրէն յետոյ Թորոսը նամակ ստացաւ Վաւիթ բէկէն, անուանել այնուհետև զՊապը փոխանորդ (նայիբ) զօրավարի: Ի հարկէ էս նշանակութիւնն ոչ միայն հօրեղօօրս, այլ և բոլոր նորա զօրքի համար անպատուութիւն համարեցաւ, ուստի և Պապն էլ սրանկողմիւնէն քաշուեց, դիպց իւր տունը, զօրքին էլ հրամայեց զնալ իւրեանց տներն ու սպասն միայն — մի միայն իւր հրամանին: Թորոս զօրավարը տեսնելով որ Պապն առանց ինքեան հետ ողջունելոյ յանկարծ չուել է զօրքովը գնացել, շատ կնեղանայ, և հետզհետէ մարդիք կուղարկէ վերադառնայ, բայց նա յամառուած, չուղեց անդամ լսել նրա ապրասարանքն: Վանի մի օրէն յետոյ Թորոսը հարիւրաչափ երեւելի մարդկանցից բաղկացեալ ձիաւորներով եկաւ հօրեղօօրս տեսութիւն, երկու ընտիր նժոյգներ էլ պարզե բերելով, չորս օր կայաւ նրա մօտ, միտիթարեց, յուսադրեց, սիրան առաւ և խոստացաւ մի այլ անգամ յաղթութիւն անելէն յետոյ, անշուշտ զօրա-

վարութեան կոչումն տունէ Վաւիթ բէկէն: Հօրեղօօրս Թորոսի խոստմանը հաւատարով, կրկին միացաւ նորա հետ, միմեանց օգնելով, զուպեցին դրացի թշնամիները, մանաւանդ Անավուզէն զուրս հանեցին բոլոր մահմետականներն, ուր միմիայն Հայերը մնալով, այնուհետև էլ Վաթ — Ալի խանն երկիւղ կրելով, ասպատակութիւն չէր կարողանում անել, և մեք մեր հօտերը, ջոկերը, նախիրներն ամենուրեք անգրաս, աներկիւղ կարածացնէինք, շատ անդամ էլ մի դիւղէն միւս դիւղը զնալիս, կանայք անգամ առանց տղամարդի կերթային, այն ինչ նախ քան զայն կարի դժուարին էր»:

«Աստեղ փոքր ինչ շեղուինք մեր պատմութիւնէն և ասենք ինչ ինչ տեղեկութիւններ, որք կվերաբերին մեր Հայերին, այս ինքն Վաւիթ բէկի գալու օրէն տարածուել էր ամենայն տեղ լուր թէ, Ռուսի թագաւորը մեծ զօրքով զուրս է եկած Վարբանդ, Բագու և գալիս է Հայերի հետ միանայ, ընդդէմ Պարսից կռիւանէ, և սրա համար էլ սարի էն կողմի այս ինքն Վիւլստանի, Խաչենի, Արանդի, Ղուգասիի և Չարաբերթի Հայ մեղիքները զօրք են պատրաստում: Աս էլ աւելացնում էին թէ, Ռուսի թագաւորը մեծ զուճարի դրամ, վաւօղ, արձիճ է զըրկել Հայերի համար, բայց Արաց թագաւորը զբաւել է, չէ կամենում առաքել, շատերն էլ հաստատում էին որ, Արաց թագաւորն ուղարկել է, բայց սարի էն կողմի վերոյիշեալ մեղիքները թող չեն տալիս բերն մեզ հասցնեն: Աս եկաւ եկան, ասուլիսն որքան Հայերին քաջալերում էին, յոյս էին տալիս, կնքան էլ

Թշնամիները վհատում էին: Բայց նրանց ուշանալն և սուտ լինելը մերերի ակնկալութիւնները ի վերջոյ ի դերև հանեցին, և ինչպէս մեզ վհատացրին, նոյնպէս էլ Թշնամիները քաջալերեցին: Բայց ի սրահէ, Աֆղանների Ասպահանք տիրելը, Շահը բանտարկելը, նրա որդի Շահ Թամազը փախչելը, փտարանդի Թափառին ու անկարող լինելը զօրաժողով լինիլ, էնպիսի լուրեր էին, որոնք ինչպէս մեր Թըշնամիները, նոյնպէս էլ մեք, իւրաքանչիւրն իւր օգտի հետևութիւնն էր երևակայում ու մեկնում, իւրաքանչիւրն ըստ իւր քմաց իւր օգտի յառաջադիմութեան լուրերն էր տարածում: Բայց հետզհետէ երբ ստուգուեցաւ Ռուսաց զօրքի վերադառնալն, և թէ Շահ Թամազն եկած է Թալիզ, և որպէս թէ նա բանակով շուտով գալոց է զսպել զայնրը, մեծ հարուած տուեց մեզ, ինչպէս կերևայ յետագայ պատմութենէս:

(Մնացեալն ի յետագայում)
 ԳՆԱՐԻՍ ՇԻՐՄԱՋԱՆՆԱՆՏ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԳԻՒԱԿԱՆ ԹԱՅՄՁ ԼՐԱԳՐԻ
 ՍԿՋԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ
 Ե Ի
 ՆՈՐԱ ՅԱՌԱՋԱԳԻՄՈՒԹԵԱՆ ԸՆԹՈՅՔԸ.

Անգլիոյ ազատամիտ տէրութեան մջ մի իշխանութիւն կայ, որ ոչ թագուհուցն է յառաջ գալիս և ոչ խորհրդանոցն, բայց և այսպէս այդ իշխանութիւնը ամենամեծ ազդեցութիւն է զործում իրողու-

թեանց վերայ: Այսպիսի տարօրինակ պարագայի մասին որ և է տեղեկութիւնը անտարակոյս հետաքրքրաշարժ համարելով, արժան դատեցինք հաղորդել ընթերցասիրաց նորա մանրամասնութիւնքը:

Նրբ որ Անգլիոյ ժողովուրդը անտարբեր է կամ անմիաբան իւր կարծեաց մջ, տէրութիւնը ընդարձակաբար վարում է իւր իշխանութիւնը, բայց այն ինչ այդ ժողովուրդը յուզուած է և միաբան, նա խօսում է բարցրաձայն և որ և է վարչութեան անհնար է նորան ընդդիմանալ:

Եթէ ժողովուրդի կամքը այդպիսի անյաղթ չարութիւն ունի, ում է յանձնուած ուրեմն այդ կամքը յայտնելու իրաւունքը:

Առաջուայ ժամանակները համարեա բոլոր այն մարդիկը, որոնք կարող էին յանձն առնուլ այդպիսի աշխատութիւնը, ամենայն չարութենէ հետևում էին կարծիք յօրինել, պարզաբանում էին իւրեանց սեփական միտքերը, ջանք էին անում ձեռք բերել և իւրեանց բարեկամները, թէ բերանացի վեճաբանութեանց մջ, և թէ յետագայ ժամանակներում երկար զբաւոր տեղեկութեանց մջ: Բայց հետզհետէ, իբր սպազրութեան զիւտի ուշացած արդիւնք, այդ աշխատութիւնը նոր որոշումների ենթարկուեցաւ: Վճռական կերպիւ զատեցին, թէ մի քանի պատշաճաւոր մարդիկ որոնք քաղաքական խնդիրների վարժութիւնը առաջին պաշտօն էին համարում իւրեանց համար, աւելի յաջողութեամբ կարող էին այդպիսի գործը կատարել, քան միւսները, որոնք սովորաբար այլ և այլ գործերով զբաղուած, զիպուածաբար և մեկուսի պիտէր վճարէին այդ ջանքը: Այն

ինչ այդ փոփոխութիւնը կատարուին ըստացաւ, ազգային զործերի գնահատութիւնը ու տէրութենական անձանց մասին յայտնի եղած վճռական կարծիքը ուղղակի ազգի որոշումէն անցաւ նորանց ձեռքը՝ որոնք գրել գիտէին: Այսպէս ինչ որ մինչ այդ ժամանակ ընդհանուր իմացութեան վերաբերելով, հազարաւոր անձինք կատարում էին պատահաբար, եղաւ ճարտարարուեստութեան ճիւղ, որ մի փոքրիկ խումբ մշակում էր զօրաւոր յաջողութեամբ:

Այսուհետեւ տեսան, թէ որ և է տպագրած ուժիկ, վայելուչ և ամենակարեւոր յօդուածը առաւել պարզ մտքեր էր հազորում, քան լրած խօսակցութիւնները, կամ կարդացած նամակները: Այդ որոշման մէջ այնքան կատարելագործութիւններ արին վերջապէս և այսպէս պատշաճացուցին հասարակաց կարծիք յօրինելուն, մինչ զի մի լրագիր կարդալով և նորա առաջադրութիւնները և պատճառաբերութիւնները առանց դժուարութեան ընդունելով, անղլեացին կարէր աշխատ չլինել իւր քաղաքական համոզմունքը քննելու և ինքն ըստ ինքեան որ և է եզրակացութեան գալու:

Ի այց և այսպէս, լաւ չէ հանապազօրեայ սովորութեամբ ինչայել իւր ջանքը որ մարդու կենսական տարրն է, որովհետեւ ազատասէր քաղաքացուն հասարակաց զործերի վերայ մտածելու հոգսից զերծ թողնելը կնշանակէ բառնալ նորա վերայից վարչութեան իւրապատիական մտքը: Արքան և անժխտելի լինէր, թէ հասարակաց կարծիքների հետեւողը աւելի լաւ առաջնորդ էր ունենալու՝ քան թէ իւր սե-

փական անուշակ միտքը կարէր պատրաստել, այնու ամենայնիւ այդպիսի մարդը աւելի պակասաւոր է և աւելի անարդար, քան թէ նա՝ որ աշխատում է ինքն իւրան մտածել, թէև ամարդորէն մտածելու լինէր: Կնչպէս մի մարդու արժանաւորութիւնը, որ և է նկատողութեամբ, կարէ նուազել եթէ նա սովորութիւն է շինել իւր վտահութիւնը միշտ դնել ոստիկանութեան զործակալի կամ նորա ղեկուորի վերայ, որոնք նորան հանդիստ են թողնում իւր անձնը պաշտպանելու հոչսից և անձկութիւնից, նոյնպէս նորա մտաւոր կարողութիւնը և արդարութեան զգացումը դուրս կարեն յոռանալ, եթէ թոյլ տայ իւրան չափազանց ստրկութեամբ հետեւել քաղաքականութեան որ և է հեղինակի ուղղութեան:

Տաղանդը այն գրադէտ մարդկան, որոնք իւրեանց աշխատութիւնը նուիրել էին տպագրութեան, աւելի արագութեամբ աճեց, քան իշխանութիւնը, որ նորանք ըստացել էին այսպէս մի փոքր ժամանակի մէջ, նորանք մինչ այն աստիճան գերազանցեցին տէրութեան հռչակաւոր մարդկանցից, մինչ զի խորհրդանոցը այնուհետեւ չկարաց առաջուայ պէս հասարակաց կարծեաց միակ միջնորդը մնալ, այլ ստիպուած էր իւր առանձնաշնորհութիւնքը մասնաւորել այնպիսի հրապարակական քանքարաւոր իրաւախոհներին հետ, որոնց անունը անդամ չգիտէր:

Թէև Խորհրդանոցը այնպիսի նշանակութիւն և արժանաւորութիւն ունէր, որոնք իսկապէս նորա սեփականութիւնն էին, բայց և այսպէս ի բաց առած նորա համբաւաւոր անդամները, այդ ատենը

առաւել օգուտ քան փնաս էր ստանում՝
 ճածուկ ոսոխութեան ընկերակցութիւնից,
 ուրեմն յետ մնացողը ժողովուրդն էր: Մնդ-
 հանրապէս ժողովուրդին երկար ժամանակ
 է հարկաւոր քաղաքակրթութեան յառա-
 ջադիմութիւնը իւրան պատշաճեցնելու
 համար, այս պատճառաւ ժողովուրդը բը-
 նականաբար չէր կարում հասնել հրա-
 պարակական հեղինակի տաղանդին և դի-
 տութեանը, որոնք օրէօր աճում և զար-
 դանում էին, նա հազիւ հասկանում էր
 այն փոփոխութեան նշանակութիւնը՝ որ
 արդէն կատարուել էր: Մինչ դեռ լրա-
 դրապետը կրնարուէր նորա յաջողակու-
 թեան պատճառաւ և կլարէր իւր պաշ-
 տօնը այն լիազօր իշխանութեամբ, որ տա-
 լիս էին նորան կրթութիւնը և ուղղու-
 թիւնը, ընթերցողք մոլորուած աստան-
 դում էին դիպուածէ դիպուած և միաբա-
 նութեամբ գործելու միջոց որոնելով այն-
 պիսի հրապարակախօսների էին հանդի-
 պում, որոնք բռնի և շատպով գրաւում
 էին նորանց ազդեցութիւնը: Միւս կողմա-
 նէ լրագրերի ընթերցողքը բաւական զան-
 րազ էին իւրեանց վիճակուած նոր ջանքը
 հասկանալու համար, նորանք ուշ իմացան՝
 թէ իւրեանց էր պատկան քննողական մըտ-
 քով դատել մի օտարականի գրուածքը,
 որուն ոչ տեսնում էին և ոչ ճանաչում
 և որ ինքն իւրան առաջարկում էր ոչ մի-
 այն ուղեցոյց լինել նորանց, այլ և խօսել
 նորանց անունով. նորանք չէին հասկացել
 դեռ ևս, թէ պարտաւոր էին շափաւոր
 վատահուժիւնով կարգալ յօլուածները,
 ինչպէս երբեմն իւրեանց նախնիքն էին վա-
 բուել, լսելով իշխանաց և տէրութեանական
 անձանց խօսքերը: Տպագրութենէ առա-

տաձեննած բարեարարութիւնքը զուցէ այն
 ժամանակ միայն կատարեալ կլինին, երբ
 ընթերցողների զործադրութիւնը, խոհե-
 մութիւնը և մանաւանդ քաջասիրտ ար-
 դարութիւնը կհաւասարեն լրագրերի մեջ
 խօսողների յատկութեանց: Երդէն այդ մա-
 սին մի օգտակար փոփոխութիւն գործուել
 է և եթէ մեր ժամանակում մէկը ստիճորէն
 երգաբանում է օրագրութեան կցկաւոր
 խօսքերը, նորան ձայնակից չեն լինում հա-
 զարաւոր անձինք, որոնք մի քանի տարի
 առաջ կրկնում էին այդպիսի խօսքերը միա-
 բան երգեցողութեամբ: Բայց ոչ որ ու-
 բունալու չէ, թէ Խրիմի պատերազմի ժա-
 մանակը, Ենդլիացու սովորական խօսակ-
 ցութիւնը բոլոր տպագրած բաների դէմ,
 ըստ մեծի մասին վերջանում էր «Ջնով»:

Ժողովուրդը երկար ժամանակ պահպա-
 նել էր անկախ կարծիք ունենալու նախնի
 սովորութեան մի փոքր նշմարանքը, ըստ
 որում հրաւիրում էր երբեմն վերջին դա-
 տը անելու այն հակառակ խորհուրդների
 մեջ, որոնց լուծումը առաջարկում էին ընդ-
 դիմակաց բանակների լրագրապետքը: Բայց
 պատերազմից շատ տարի առաջ մի ուրիշ
 փոփոխութիւն եղաւ: Սահմանադրութիւ-
 նով հնարած գործիքը ժողովուրդի կարծի-
 քը իմանալու համար շատ հեռի էր կատա-
 բելութիւնից, որքան և ազդարարութիւն-
 ներ էին լինում Խորհրդամոյցի և հրապա-
 րակական իրաւախօսների կողմից, այնու
 ամենայնիւ կարելի չէր լինում միշտ ստու-
 զութեամբ յայտնել ազգի կամքը, ոմանք
 համարձակ ասում էին, թէ Ենդլիան այս
 ինչ բանն է ուղղում, միւսները հաստատում
 էին նորա հակառակը. սորա հետեւանքը
 այն եղաւ որ, հատարակ քաղաքացիք իւ-

բանք յանձն առին ժողովուրդի կամքը յօրինել և հրապարակաւ յայտնել :

Խրիմի պատերազմից շատ և շատ տարի առաջ, Անգլիոյ մի քանի գաւառներում բնակում էին այնպիսի այրի կանայք և ազնուական մարդիկ, որոնց միաբանութիւնը աւանդապահ էր մի իշխանութեան՝ որ նշանակուած էր հզօր ազդեցութիւն գործելու պատերազմի ուղղութեան վերայ: Երկու դարեր բնութեան տէր էին սորանք և ուրիշների չափով անգամ չէին զգում քաղաքականութեան մէջ խառնուելու կարեւորութիւնը: Բայց և այսպէս, թէ՛ նրւերներով և կապարարութեամբ և թէ՛ տոհմական և ամուսնական պարագաներով, սորանք եղել էին մի հինօրեայ վաճառաշահ տան, կամ լաւ ևս ասել, մի ընկերութեան անդամներ. ընկերութեան նպատակն էր շուրեր ժողովել և տարածել: Այնքան ողջամտութիւն և բանխմացութիւն ունէին սորանք որ հասկանում էին, թէ այդ հզօր մեքենան գործադրելու և ուղղելու համար պիտի սաստկապէս զգուշանային միմեանց հետ վեճելուց: Այսպէս նորանք հանդիստ մնացին ամենքը իւրեանց տանը և իւրեանց ձեռնարկութիւնը Աօնդօնում վարելու համար ընտրեցին քանքարաւոր և գործունեայ մարդիկ: Բնկերութիւնը որոշեց հրատարակել մի այնպիսի լրագիր, որ բովանդակէր աշխարհի բոլոր անցքերի տեղեկութիւնը ամեն տեսակ և ամեն պայմանի մարդկանց նամակները, որոնք ուզում էին իւրեանց սիրած գաղափարները հաղորդել ժողովուրդին: Արագիրը պարտաւորուած էր բոլոր այդ բաների մէջ խառնել մի քանի կարճ յօդուածներ, որոնք վերաբերէին ժամանակակից քաղաքակա-

նութեան նիւթերին: Բայ ի սորանէ, մի որոշած գումար հատուցանելով, ով որ կամենար, կարող էր իւր ուղածը հրատարակել այդ թերթի մէջ յայտարարութեան ձևով: Արագիրը, որ բովանդակում էր այդ չորս զանազան առարկաները, շատ աժան գնով հասնում էր ժողովուրդի ձեռքը:

Աւեր ժողովելու մէջ՝ ընկերութիւնը նորանշան գործունէութիւն ցուցուց: Այն պատերազմերի ժամանակ, որոնք ծագեցին Փրանսիական յեղափոխութիւնից յետոյ, նա այնպիսի արագութեամբ էր նամականիք ուղարկել տալիս իւրան ցամաքային երկիրներից, մինչ զի շատ անգամ սորանք աւելի առաջ էին տասցուում քան կառավարութենէ ստացածները: Աւեր իր կիրներում տէրութեան այդպիսի յետամնացութիւնը խոյտառակութիւն կ'համարէին, բայց անպիտան սիրում էին մրտածել թէ կարող էին գնել և կարող իւրեանց մէջ այն բաները՝ որ ղեռ ևս նոյն ինքն նախարարը հաղիւ թէ իմանում էր և ծափահարում էին իւրեանց քաղաքակցուց յառաջադիմութեան, որ ստիպում էր խորհրդարանի հետ: Այդ ժամանակից ըսկաւ, թերթը ճանաչեց իւր ազդեցութեան զարգացումը, նա եղաւ բոլոր աշխարհի լրագրերից լաւագոյնը և այս պարագան աւելի ևս յառաջացուց նորան, այնպէս որ, հրապարակաստութեան ամենակարեւոր գործարանը դարձաւ: Արոնք մինչ այժմ իսլ թափառում էին հողագունտի լաբիրինթոսի մէջ կարեւոր և անձանօթ բաների տեղեկութիւն խնդրելով, լրագիրը ընդունեցին իբրև թել ուղեցոյց: Թէ մի գահակորոյս իշխան՝ որ իւր թագաւորութիւնը պահանջում լինէր, և թէ մի ծառայ

որ սպասաւորելու տեղ ուզում լինէր գտնել, կամ մի մայր՝ որմէ իրել էին նորա զաւակը, ամենքը այնուհետեւ այդ լրագրի օգնութեան դիմեցին:

Տգիտութիւնը զալես էր խօսակցելու նորա մէջ իմաստութեան հետ, արդար ցասումը (բարկութիւն) տեսակցութեան տեղի էր նշանակում ատելութեան և չարութեան և այս դիպուածքը անցնում չէին առանց հոյակապ արդիւնք յառաջացնելու: Ափոթուած և դառնացած հոգիքը, տեսնելով թէ աշխարհը խուլ էր դէպի նորանց բորբոքը, թափում էին լրագրի մէջ իւրեանց զայրուցքը կամ հանդէս էին հանում իւրեանց դիտութիւնը՝ ամբողջ ազգի կամ նոյն իսկ ամբողջ քաղաքակրթուած աշխարհի վիպութիւնը խնդրելով: Պահանջատէր բազմութիւնը ներկայանում էր այդ ատենին, որ կազմուած անձանօթ մարդկանցից, նորանց դատը ինչպէս և իցէ տեսնում էր: Այդ դատը, թէև կրթեմն բռնաբարական, բայց երբէք կաշառքով ապականած չէր: Այն յարանունը (աւելորդ գնով անուն), որ արևելեան առասպելաւարութիւնը տալիս է Սուլթանին, աւելի արդարութեամբ կարէր պահանջել լրագիրը, ըստ որում որ և է նկատողութեամբ՝ նա եղել էր աշխարհի պատուարանը:

Մինչ այդ ժամանակ ընկերութիւնը նոյն դիրքի մէջ էր, որպէս և միւս շահադէտները, և եթէ նա կանգ առնէր այդ վիճակում, մենք պարտաւոր չէինք լինիլ քննել նորա աշխատանաց արդիւնքը: Բայց, վաղուց արդէն ընկերութեան վարչութիւնը զրաւուած էր այն մտքով, թէ հասարակաց հետազօտութեան մի մասովը դանց էր

արել, նորան հաւանական էր երևում, թէ որ և անպիացի անշուշտ կցանկար, առանց հրաժարուելու իւր տան կենդրոնից, իմանալ, թէ իւր հայրենակից ժողովուրդը ի՞նչ է մտածում այն կարևոր խնդիրների մասին՝ որոնք խորհրդանոցի օրական կարգումն են: Այդպիսի հակամտութեան ապացուցութիւնը յայտնի երևում էր թղթակիցների նամակներից, որոնք և համոզեցին ընկերութեան գործակալներին վճռել, թէ մի փոքր աւելի աշխատութիւնով և ծախքով կարելի էր տեղեկանալ, թէ ի՞նչ կարծիք էին ընդունելութիւն գտնում և ցուցանել զաղափարների ուղղութիւնը: Ասում են, իբր այս դիտաւորութեամբ մի պարսպ և խորամանկ նախարար շուտուց արդէն յանձն է առել շօջիլ հասարակաց ժողովատեղեքը և խմանալ ինչ որ մտածում են ժամանակի յուզմանց զխաւոր առարկաների մասին:

Նորա պարտաւորութիւնն է ականջ չ'դնել ոչ յայտնի յիմարաբանութիւններին և ոչ խելամուտ մարդկանց խօսքերին, այլ համբերութեամբ սպասել՝ մինչև որ միևնոյն կարծիքը կ'կրկնուին այլ և այլ տեղերում այսպիսի մարդկանցից, որոնք հաւանականաբար միմեանց հետ յառաջադրյն չ'կին: Այդ էր ընկերութեան ցանկացածը և այդ աւարն էր բերում նորա բարձրատիճան գործակալը: Նա այնքան յաջողակ եղաւ այդ տարօրինակ արուեստի մէջ որ, ընկերութիւնը սակաւ կրթեմն սխալում կամ խաբւում էր: Թէև նա մի ժամանակ թրշնամանք կրեց և նորա ջանքը ապարդիւն եղան, բայց երբէք չ'դադարեց ազգի նոյն իսկ սրտի էջերը կարգաւ:

Յանկացած տեղեկութիւնքը ստանալուց յետոյ, վարչութեան գլխաւորները պատաստում էին տարածել հրատարակութեամբ, բայց ոչ այն պարզ ձևով, որով ժողովուրդը յայտնել էր իւր կարծիքը, այլ սորա համար հրաւիրում էին ճարտար հեղինակների գրիչը, որոնք պարտաւոր էին ժողովուրդի յօժարամտութիւնքը գեղեցիկ պատճառաբանութիւններով զարդարել: Անթաղրելով, թէ հեղինակները ստոյգ տեղեկութիւն ունենէին ժողովուրդի հակամտութեան, նորանց պատճառաբանութիւնքը բնականաբար բարեհաճոյ ընդունելութիւն էին գտնում ունկնդիրներից: Ժողովուրդի այն մասը, որ արդէն իւր կարծիքը կազմել և յայտնել էր, լրագրի մէջ տեսնում էր նոյն բանը, այս ինքն, իւր սեփական միտքը, բայց այնպիսի ճարտարարուեստ գեղեցկախօսութեամբ զարդարած, որ իւր համար բոլորովին ամտածելի էր. իսկ միւս մասը, որ դեռ ևս իւր միտք և կարծիքը չէր վճռել, ստիպուած էր ըննում դէպի միաբանութիւն, տեսնելով որ ընկերութիւնը յանձնառու էր եղել իսկապէս հասարակաց կարծեսաց այլ և այլ ձևերին հետևել: Լրագիրը ժողովուրդի կարծեսաց մասին հրատարակած յայտարարութիւնը խառնում էր միւս այնպիսի ապացուցութիւնների հետ, որոնք պաշտպանելու էին նորան յօժարամտութիւնը և այսպէս, ով որ ուրիշ միտքը իմանալու համար կարդում էր այդ յայտարարութիւնը, ապշում էր նորա զօրաւոր պատճառաբանութիւնների վերայ ու մի այլ ոք, որ իւրան կարծում էր թէ միայն ճաշակի յանկուցիչ ազդեցութեանն էր հնազանդում, միամտութեամբ նոյն յայտարարութիւնը ընդունում

էր իւրան ուղեցոյց և տեսնելով նորա մէջ ազդի ընդունած դադափարները, ինքն ևս յօժարակամ մտնում էր իւր հայրենակիցների խումբը: Ինչպէս որ և է մարդարէութեան մանրամասն պատմաբանութիւնը երբեմն լաւագոյն հնարն է նորա կատարումը տալուն, այսպէս և հասարակաց զոյցը, որ հաստատում է, թէ ժողովուրդի բազմութիւնը ընդունել է որ և է կարծիք, կարէ շատ անգամ յառաջացնել այդ բազմութեան կանխաւ պաշտպանած մտքի հաւանութիւնը: Այդ կրկին ներգործութեան բնական հետևանքը այն եղաւ որ, ընդհանրապէս ժողովուրդի կարծիքը միաբանում էր ընկերութիւնից հրատարակած յօրուածների հետ և որքան առաւել լրագիրը համարում էին իսկական թարգման ազգային կարծեսաց, այնքան առաւել սորա ժողովրդականութիւնը զօրանում էր:

Այսպէս տպագրական ընկերութիւնը ստացաւ հզոր իշխանութիւնը: Այլ թէ մենք կարացինք մեր միտքը լաւ հասկացնել, պէտք է ուրեմն պարզապէս ապացուցած ընկնք, թէ լրագրի այսօրինակ ազդեցութիւնը աւելի ընդարձակ տարածութիւն էր ստացել, քան որ կոչում են մամուլը կամ տպագրութեան իշխանութիւն: Անչամի մեծ զանազանութիւն կայ, զոր օրինակ, այն դիպուածի մէջ, երբ մի մարդուց ամբաստանում են յանդիմանութիւններով և կշտամբիչ խօսք քերով, որոնք լրագրապետի մասնաւոր կարծիքն են և այն պարագայի մէջ, երբ այժմարդուն այնպիսի յօրուածի մէջ են բերում, որ թէ և յանդիմանութեան ձևով լինէր գրուած, բայց և այսպէս, իրաւամբ կամ անիրաւաբար, ընդունած է իբրև անգլխական ժողովուրդի վճիռ: Առաջին

դիպուածոմ՝ այդ մարդը միայն մեղա-
դրուած է, իսկ երկրորդում՝ արդէն դատա-
պարտուած է:

Արքան և գորաւոր լինելը ընկերութեան
ազդեցութիւնը, նա չէր կարող անձնակա-
մութեամբ կամ անիրաւութեամբ դործել
այդպիսի բանը՝ եթէ, չէր ուզում: Մնասել
իւր տարօրինակ վաճառաշահութեան: Ա-
ռաւել պատգամաւորական (երեսփոխա-
նական) նշանակութիւն ունէր նա՝ քան
ինքնակալական, ուստի պարտաւորուած
էր, նոյն իսկ իւր գոյութեան անփութելի
օրինօք, պահպանել որքան հնար էր, իւր
միաբանութիւնը ազդի բազմութեան հետ:

Այս էր ահա Անդրիոյ երեւելի լրագիրը,
այդ տպագրած թերթի կամ նորա ծածուկ
գործարանաւորութեան վերայ խօսելու
սովորաբար ասում էին թայմը: Այդ գո-
յականին յառաջընթաց էին լինում՝ եր-
բեմն այնպիսի վերնագրեր [epithetes], որոնք
ցուցանում էին, թէ թերթը ընդունուած
էր իբրև մի գործունեայ և զգայուն էակ,
որոյ կեանքը աւելի երկար էր լինելու, քան
մի հասարակ մահկանացուի կեանքը, որ
չնուած էր բանականութիւնով և ահա-
զին զօրութիւնով, ունէր շատ տիտուր
մարդկային յօժարութիւններ և փոխակա-
նութարկուած էր այն մեծամեծ պատիժնե-
րը կրելու, որոնք խոստացած են յայնա-
ւորութեան (*):

(*) Այն ձեւը, որ լրագիրը գործ է անում որեւէ
գործարանի կամ նորա արդեանց վերայ խօսելու,
այնպիսի յարմարութեամբ մտել է անդիական լե-
զուի մէջ որ, բաց ի սաստիկ վերագրերը, կարելի է
ամենեւին առանց վտանգի ընդունել ընդհանրապէս
եւ քերականական կազմութիւններէ մասին թայմըն

Ա երջապէս, այդ թերթի տարօրինակ
իշխանութեան ընդհանուր զործադրու-
թեան մասին հարկ է ասել, թէ նա առա-
ւել ցանկանում է առաջնորդել ազգին
դէպի յառաջադիմութիւն, քան թէ նորա
մոլորութեանց քամակից գնալ: Նորա ու-
զածը, ամեն բանից առաջ, այն չէ որ նա
առաւել իմաստուն կամ լաւ լինի քան
Անդրիոյ ժողովուրդը, այլ նման լինի այդ
ժողովուրդին, նորան ընկերութիւն անէ
ամեն դիմագրաւութեանց մէջ, թէ բարե-
խորհուրդ լինէին նորա և թէ յանդուգն,
հաղորդ լինի նորա յուսոյն և անյուսու-
թեանը, նորա ուրախութեան և ցաւերին,
նորա երախտադիտութեան և բարկու-
թեան:

Թայմընէն է Գաղղիականէն
Մ. ԹԹԻՏԱՂԵՍԵՏ.

նոյն նշանակութիւնը ասի, որ ինչ տպիս են մի հր-
փեշմակի, հերոսի, սուրբի, սատանայի կամ դատա-
պարտուած յանցաւորի յատուկ անուններին: Իս-
կական անդիացու սովորութիւնն է ասել՝ «թայմը
կպաշտպանէ նորան, թայմը զրգուած է. թայմը
ընկնում է նորան. երջանիկ թայմը բանը կարգի
կրէ. անիծած թայմը է բոլոր այդ չարքը գոր-
ծել»:

Սորանցիցն Պարսկաստան ըշտապելով վազեցին,
 Այնքան հեռու տեղերէ եկան Հայոց ճարեցին,
 Փառք Աստուծոյ կան Հայեր՝ նման են հողմազացի,
 Հակառակ հողմոց առաջ շուտ դառնան որ կողմ լինի:
 Արդեօք դորանք ինչ կասեն, Յիսուսի աշակերտ են,
 Պարսիկներին չեն տեսնուժ թող նորանցն քարոզեն:
 Թէ որ նորանց դարձուցին՝ հոգւով նորանց ծառայ ենք,
 Կրկին մեզ կքարոզեն, միթէ մենք Քրիստոնեայ չենք:
 Այժմ մեր ազգ չի մտածէր արդեօք առաջ քան Լուսեր՝
 Սերմանեցին մեր մէջն տեսակ տեսակ որովներ:
 Այն աստիճան հասցուցին՝ իրար սպանել կուղէին,
 Մեզ միմեանցից բաժանող միթէ այդ մարդիկ չէին:
 Հազիւ ուսման ջնորհիւն Հայք կուզեն սիրել զիրար,
 Նոր Աշխարհէն վազնելով եկած են Հայոց համար:
 Վաղ այդ մարդիկ տային մեզ հինցած Կաթողիկոսութիւն,
 Այժմ էլ ահա կախուցեն նոր Բրոթեսթանտութիւն:
 Մեզ կերելի որ փոխվին՝ թերեւս վերջն էլ ի Վոլթեռ,
 Խնդրեմ ազգի նորերից փոյթ չ'լինեն անհամբեր:
 Մինչեւ տեսնեն այդ մարդիկ ո՛ւր ձգեն խարիսխ՝ հաստատ,
 Պարսիկ դուրս բերեն դարձեալ նոր այլ տեսակ կրօն ազատ:
 Դրանք իրանց կրօնքն զգեստի նմանցրին,
 Եղանակների յարմար՝ տեսակ տեսակ փոխեցին:
 Երբ Քրիստոսն է ասած դուք՝ Պարսկաստան գնացէք,
 Այլազգիներն թողէք՝ հաւատացեալ քարոզէք:
 Ձգեն մեր մէջ վրդովմունք՝ լինին պատճառ բաժանմանց,
 Զ'է այս նպատակ բարի կ'վկայէ Բժշկեանց:

Ի գի-դն Քէլարապատ
 (Թուրքաբունի նահանգն.)



Handwritten text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several lines and appears to be a continuation of the poem or a related commentary.

ԾԵՐՈՒՆԻՈՅ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ԵՒ ՄԱՀԸ:

Մահն ազատ ինձ կանչում է
 Դէպ Հայրենի Մօրս ծոցը
 Նոր կեանք ինձ խոստանում է
 Ուր փարատի սրտիս խոցը:
 Ո՛հ դառն է ինձ այս աշխարհ,
 Դառն է սորա հրապուրանք.
 Ամենն աչքիս են վատթար,
 Քանի մնաք՝ պէտք է լանք:

Ես գնում եմ յայն հանդէս,
 Ուր աւժբաժ են որդիքս,
 Ուր կտեսնեմ իմ Ներսէս
 Քաջ ընկերաց հետ Գաղիկս:
 Այն տեղ լինի սուրբ սեղան,
 Եւ սրբութեան տաճարներ.
 Այն տեղ կեանք ինձ անվախճան,
 Ազատութեան նոր օրեր:

Որքան ունի՞ս մեծութիւն,
 Չունիս մի յոյս հաստատուն,
 Որքան վանձեք ժողովես,
 Չունիս անբանտ տեղ ու տուն:
 Գարնան բուսած ծաղկի պէս
 Ամին մի փառք կանգանէ,
 Տրամուծեամք լիր տան տնտես
 Անհիմն տանից կելանէ:

Ահա ինձ ձեզ օրինակ,
 Որ ունեցայ շատ սրդիք,
 Շատ զանձատուն եւ սենեակք
 Եւ վարչութիւնք, հրքանիք:
 Այժմ զրկուած ամենից,
 Տեսէք օրս վատարախտ.
 Թափուր եմ բոթոր փառքից
 Մարմինս պատած է ժանտախտ:

Պէտք է շինենք մեզ աներ
 Երկընդունը հողեպէս,
 Որ չխախտեն գոռ զետեր
 Թշնամութեան մեծապէս:
 Մնաք բարեաւ կացարանք,
 Իմ ծննդեան որդաններ,
 Որդուցս վեհ հանդիսարանք
 Նուիրական տաճարներ:


Իմ հովիտների եւ լեռների
 Իմ ծաղկաւետ դաշտորայք
 Կարկաչասահ սուրբ զետեր:
 Մնաք բարեաւ զանկալի
 Իմ օրհնագուրկ քաղաքներ
 Բազմահաւուց խեղճ Ունի,
 Այրիացեալ աւաններ:
 Մնաք բարեաւ հէպ ուրդիկի
 Կամնակարօտ գաւաիներ,
 Վերջին զբզուանքս կենսափկ
 Չեզ նուիրեմ սրտամեռ:

Ո՛հ իմ ոսկերք միշտ թացէք
 Չեր արտասուեաց կամիրով,
 Եւ անուես մի կորուսէք՝
 Գարուց ի կարս յիշելով:
 Գէ՛ն ընդունէք իմ վերջի
 Հրաժարական այս բարեւ.
 Ժամ է ինձ անդառնալի
 Մտնել յայս տուն անարեւ:

Կողմ մի օր ինձ համար՝
 Որ ես կեղեմ այս շիրմէս,
 Կտեսնեմ ձեզ շրջապար
 Եւ կառնեմ ձեզ նոր իրկես:
 Բաց արա գուռդ ո՛վ շիրիմ,
 Մտնեմ այս տեղ ի հանդիստ.
 Վաղուց արդէն սպասում եմ
 Քողդ մէջ առնել վերջիե նիս:

ՉԱՀԱՆ ՔԱՂԱՆԱՅ ՏԵՐ ԾՈՂԱՆՆԵՒՍԵՆՍԵՑ

ՉԵՐԷ՝ԱՆ.



ԳԷԶՅՈՒՆ.

Թող հրճուի այսուհետ անծկալի Հայաստանը,
 Իւր հարազատ ծոցումն տնկեցին բուրաստանը:
 Յուսամ լինի ոսկեզար նորահաս մանկանց համար,
 Փայլին նորա զոյնզոյն որպէս ծիածան կամար:
 Հայաստանի մեղմ օղը թող տայ նորանց զօրութիւն,
 Շուտով ծաղկին ազդի մէջ սապօպային օգնութիւն:

Հայաստանի արմատից նորարարոց բուսանի:

Այդպիսի ջանքովը դաննայ մեզ իսկ հովանի
Գերազարդեալ հասուննայ ամեն ուրեք տարածէ
Ծիւր: Տիւղեր, եւ ոտեր, եւ շատերին պա
տուաստէ:

Մեր հինաւորից բուրաստան յուսամ կրկին ճոխա
նայ:

Բարձրանունի բոյներով զոգելի հանդիսանայ:

Տա՛ր ժամանակն հնձ միջոց ես ի ներքոյ Թուփերի
Այդ սիրուն բուրաստանում առժամանակ հանգ
չի:

Քաղցած հաւն կերազէ ցորեանի սուստուղիւն:

Պարսկահային երբ լինի մի այդպէս բարորութիւն:
Յառաջիկայ դարնանը ես կուզէի անդ երթալ:

Նորան օրտիս խորունկէն որդիաբար բարեւ
տայ:

Ես պատմէի թէ հնչպէս Պարսկաստանի մեր Հայեր
Անբուայից ցնծունով մարդեն նորան շատ դա
րեր:

Սակայն բազառ չեղողոց որ կասարեմ իմ սուրբ
ուխտ,

Նպատակիս հակառակ մարաւ գմեց հնձ պտն
դուխտ:

Սրտաստան հողմերն հնձ ի ճարաւ վանեցին:

Ձիս Ամբակում կարծելով դէպ Բաբելոն բշեցին:

Թող աարով որ ես մ՛նամ Պարսից Արարիպումն:

Որ չի կարծած բնաւ իմ հողոված կեանքումն:

Այդ անձանսձ քաղաքում ես մնացի շատ օրեր:

Բայց չտեսայ ոչ մի Հայ պանդխտութիւնն հնձ
անդէր:

Բաւ է բնդդ իմ խոցն հնձ, միջն երբ այտպէս չար
չարես:

Նպատակս ուր թողի, հերից այսբան արգելես:

Բեղմէ որին զանգատեմ կամ որ արածդ յիշեմ,
կարծեմ չունիմ ես հնար, զարծեալ պէտք է
համբերեմ,

Անդին օրերս անցուցիր, այսուհետ մի նախանձիր:

Յոյս չկայ տուաջ զնամ՝ այսբան հնձ քաւ համա
լիր:

Չուր է մարդուս մտածմունք թէ նորան չօգնէ բեր
մունք:

Երբ որ զայ եւ հպանէ յանպատրաստից արգել
մունք:

Յոյսն միայն է խարխիս, մարդոյ կեանքն պահպանէ:

Անօգնական նեղելոց սիրուն նովաւ հաստատ է:

Մի լեր անդոհ քո բարդէն, առ ժամ նայէ դու բեր
մանց,

Կարելի է լաւանայ՝ կյուսայ

Ի Գեղճիւն*):

ԱԶԳԱՅԻՆ

ՆԵՆՆԵՂՐՈՒԹՈՒՆ ԵՐ ԶԵՂԾՄՈՒՆԵՔ

Նշանադրութեան մէջ ի տեղիս տե
ղիս տեսնուած զեղծմանց իսպառ ա
ռաջքը առնելոյ եւ պարզե անուամբ
գիւղական մի օտար սովորութիւնը բո
լորովին արգելելով՝ ընտանեաց ոմանց
մէջ յաճախած գժտութեանց եւ այլ
վատ հետեւանաց ըստ կարելոցն առիթ
չտալոյ համար վեհ Հայրապետ հե
տադայ Կոնդակը ուղղեց Մինօղին՝ զոր
ի գիտութիւն մեր համայն ազգայնոց
կհրատարակեմք:

(*) Դեղճիւն Պարսից Արարիւն բնձնի մէջ է եւ
կկարծուի թէ սա լինի Հին Տիւղուն քաղաքն կամ թէ
նորա աւերակաց մտ շինուած. այժմս երեւելի քա
ղաք է 20 հազար Պարսից եւ Անբաղնի բնակչօք:
Այստեղ կգոյանայ Պարսից գործածելի գրեւն, որ է
վս տեսակ եղէգն:

Համարման քննարկ սրբազան Կաթողիկոսի մարտի
 Էրասմուս տիտոս Կաթողիկոսի մարտի 1869
 -ից որ իսկ նախ Կաթողիկոսի մարտի 1869
 ԳԵՈՐԳ ԵԱՌԱՅ ԲՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՄԱՆԵԼԻ
 ԿԱՄՕԲԷ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱ-
 ԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԵԱՅՐԱԳՈՑ ՊԱՏ-
 ԻՒԱՐԲ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ԵԱԽԱՄԵԾՄԱՐ ԱԹՈՒՈՑ
 ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
 ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾԵՒ

Սինդի սրբոյ Էջմիածնի.

Ի սկզբան անդ զազակալութեան մե-
 լոյ՝ տեղեկացեալ իսանգարման կարգաց
 եւ կանոնաց հարսնախօսութեան յազ-
 գի մերում որ ի կողմունս Ռուսաստա-
 նի՝ եւ ինաստալիթ զեղծմանցն յաճա-
 խելոց ի սլաւոճառս զանգարման արաշ-
 տօնական նշանադրութեան եւ զգու-
 շաւոր քննութեան՝ հակառակ կանոնաց
 եկեղեցւոյս՝ եւ զի յաւէտ տնական իմն
 եղանակաւ կատարելով զնշանադրու-
 թիւնսն՝ միայն ի մերձենալ առօրոյն
 հարստեաց զեկուցանէին քահանային
 վասն օրհնութեան պատկին, որպիսի
 յանհնարս լինէին քահանայք որպէս
 հարին էր տեղեկանալ օր յառաջ զյօ-
 ժարութենէ եւ զկամաց աղջկան եւ
 տղային, զհաս կամ զհհաս լինելոյն եւ
 զամաց հասակի խօսեցելոցն, որպէս զի
 մի ծագեցոյն անտեղութիւնք եւ ան-
 բաւականութիւնք յապագային, վասն
 որոյ մեք՝ զառաջինն ըստ մերումն նուի-
 րական պարտաւորութեան հոգ յանձին
 հալաք հաստատել զօրինաւոր կարգ նը-
 շանադրութեան եւ զկանոնս, որոշեցաք
 զկեդրոնատեղիս եւ զտուճարս առ ի
 զառաջս առնուլ բազմալնաս հետեւա-
 նաց անկարգ նշանադրութեան, եւ յետ

հրատարակելոյ յամին 1869 զայնոսիկ
 կանոնս՝ պատուիրեցաք միջոյնաւ Սինո-
 դիզ նախ գործադրել ի Թեմն Երեւա-
 նայ, եւ ապա յՍրբյախ՝ հրամանագրե-
 լով Առաջնորդաց՝ Փոխանորդաց եւ
 Գործակալաց եւ Հոգեւոր Ատենից վի-
 ճակացն եւ ամենայն քահանայից՝ վա-
 րի վայնուհետեւ ըստ հրատարակեալ
 կանոնացն եւ հրահանգացն մտովս զԱ

Արք՝ ի բազում տեղիս վիճակացն այ-
 նոցիկ ակնբերել երեւեցաւ հանրաշահ
 օգուտ կանոնաց օրինաւոր նշանադրու-
 թեան: Եւ քանզի լուաք նաեւ՝ զի ի
 գիւղական ժողովուրդս գոյ եւ վատ
 սովորութիւն ինչ պաշտի անուամբ նը-
 ւէր ի կողմանէ փեսայացուին առ ծնողս
 հարսնացուին, որով ի բազում նուագս
 առ ագաչութեան եւ առ սէր նուիրին
 շաքութեան՝ ծնողք ամուսնացուցանեն
 զգտտերս իւրեանց առանց կամաց նո-
 ցա եւ հաճութեան, իբր թէ զնոց վա-
 ճառելով զնոսա, իսկ քահանայն պատ-
 կէ զնոսա առանց կանոնական եւ զգու-
 շաւոր քննութեան, վասն որոյ կոնդա-
 կաւ մերով գրելով ի 4-ն Յունիսի
 1875 ամի ընդ համարաւ 179՝ պա-
 տուիրեցաք Սինդիզ առաքել զվերա-
 հաստատեալ առ ի մէնջ զկանոնս առ
 ամենայն Առաջնորդական Թեմն Հայոց
 Ռուսաստանեայց եւ կարգադրել զի
 յամենայն տեղիս վիճակացն գործադ-
 րեսցին անշուշտ կանոնք նշանադրու-
 թեան ըստ հրահանգացն հրատարա-
 կելոց, իսպառնսպառն իսպառնեցոյն օ-
 տարամուտ սովորութիւնք կանխանուէր
 օժտից եւ սակարկութեանց առ ան-

խոռով եւ սիրալիր կենակցութիւն խօսեցելոց ընդ միմեանս

Սակայն լսեմք՝ զի ցարդ ի տեղիս տեղիս ի վիճակս Ռուսաստանեայց զանց արարեալ զպատուիրանօք մերովք՝ ըստ վաղեմի սովորութեան իւրեանց՝ առանց զնայոյ կանխաւ ի կեդրոնատեղիս առքահանայս եւ առ գործակատարս վասն նշանադրութեան, առանց հետազօտելոյ մանրագնին զգուշութեամբ զամենայն պարագայս զանհրաժեշտ վարկուցեալս սրոց կամիցինն մտանել յամուսնութիւն, եւ առանց նախապէս հարցանելոյ եւ ստուգելոյ զհաճութիւն կամ զհաճութիւն նշանադրելեաց՝ երիտասարդին եւ օրիորդին, բոլորովին ըստ կամաց հօր վկամ խնամակալաց աղջկանց՝ տան զպաշտօն իբր թէ գնոց անուցուն զօրիորդն խօսեցեալ՝ առանց ուրոյն եւ ազատակամ հաճութեան ի բերայ՝ իսկ քահանայքն անտարբերութեամբ իմն եւ առանց հաւատարիմ կալոյ սեպուհ պարտաւորութեանց իւրեանց՝ զսուրբ խորհուրդ պսակին կատարեն առանց պարտեւ պատշաճն զգուշութեան եւ քննութեանց սահմանելոց ըստ օրինաց սրբոյ Եկեղեցւոյս, եւ այնպէս բազում անգամ նոքին իսկ պաշտօնեայք խաղաղութեան եւ սիրոյ պատճառս տան երկպառակութեանց՝ ատելութեանց եւ բազմազխմի զժբախտութեանց երկոցունց միաւորելոց ի մի մարմին օրինք սրբոյ ամուսնութեան, եւ արդ՝ ջանալով մեր հաստատուն պահել զկարգ եւ զկանոն օրինաւորնը շանադրութեան առ հասարակ ընդ ամենայն տեղիս եւ բառնալ ի միջոյ զար-

գիտականն զայն զվան պիւրութիւն տակարկութեան եւ ակամայ ամուսնութեան, սովին կոնդակաւ մերովհ հարկ համարեցաք այս երկրորդ անգամ պատուիրել Սինօդիդ զի ընդ փոյթ հրամանագրեալք Գերայատիւ Առաջնորդաց Յաջորդաց եւ ամենայն Հոգեւոր Ատենից վիճակաց Հայոց Ռուսաստանեայց՝ զգուշանալ եւ ըստ ամենայնի պրութեան հսկողութեամբ փոյթ ունել կատարման կարգադրութեանց որ վասն հարմարաստութեան, յորդոր կարգալ ժողովրդեան՝ հետեւել նորոյ այսրուսնաւոր եւ ազգայնաց ուղղութեան, որպէս զի արքութիւն կենաց եւ անարատ քաղաքալարութիւն փայլեցցի ի վարս անձնիւր ամուսնացելոց ամուսնացումն անոյնպէս զգուշանալ զի առանց կանխաւ ստուգելոյ զկատարեալ հաճութիւն եւ զհամաձայնութիւն օրիորդին եւ երիտասարդին՝ մի ոք ի քահանայից համար ձակեցցի գնալ ի կեդրոնատեղիս վասն նշանադրութեան այլ յորպէս պարտե է՝ խոստովանահայր քահանայն տեղեկացցի նախ հաւանութեան հարսնացունին եւ ավարտեացցէ ի կեդրոնատեղին եւ ըստ այնմ վկայեցցէ Պարտաւոր է խոստովանահայրն նաեւ յառաջ քան զաւուրս ինչ հարսանեաց պատրաստութեան հանդիսին առանձինն վերստին ստուգեալ իմանալ զկամս եւ զհամաձայնութիւն օրիորդին եւ երիտասարդին, եւ եթէ չիցէ արդեւ ինչ ի միջի՝ պսակել զնոսա ըստ արարողութեանց Սեկեղեցւոյս Հայաստանեայց :

Իսկ եթէ ոք յեկեղեցականաց ստահակեալ՝ զանցառութեան տացէ զկանոնս

եւ զպատուէրս մեր՝ եւ միւսանգամ ըստ
 Հանոյս Իբր զնկեց զնշանն. եւ կարարես-
 ցէ զհարանախօսող թիւն՝ լուսխտելով ըզ-
 հիմն ուղղութեան՝ զոր մեք ըստ մերումս
 պարտաւորութեան իբրեւ շինուած նոր
 միօրինակ գեղեցիկ բարեկարգութեան
 եղաք յեկեղեցւոջ գլխասցէ այնպիսին՝
 զի ոչ կարէ զանձն իւր ազատկացողաց
 նել ի նպատո՞նց զորս ունի ածել յիւր
 վերայ յարգար վրէժխնդրութենէ հարց
 սուրբ Եկեղեցւոյ՝ ի խրատ եւ ի զգուշու-
 թիւն այլոց բեւ ի բարեկարգուիլահաւ-
 նութիւն կանոնաց սուրբ Եկեղեցւոյ. ե-
 ղեւ այնպէս յուսամք քանզոչ տալի
 տակաւ առ տակաւ պահպնեսցին եւ ան-
 հետասցին առ ի թէ լուսխտութեանց եւ
 անկարգութեանց որ ընդ մեջ քան եւ
 կնոջ յապագային եւ յաճախեալ թա-
 դաւորեացէ ի նոսա միակամութիւն սեր՝
 հաւատարմութիւն պն միմեանս հան-
 դերձ սրտացաւ կարեկցութեամբ եւ հա-
 դորդակցութեամբ ի վիշտս ի յաջողու-
 թիւնս եւ յյամենայն զէպս անցաւ որ
 կենցաղոյս օճագ ցրա՞մամբ օտարս
 ամուսն մասն մամսա՞մամբ ցրապից
 մասնոց բմ (Սորա գրքն իւր) ան մկար
 որ ասուցաթ զքան յիւր նմա ասց զմ մկ
 մագ ԳԵՕՐԳ Ի ԿԱՔՈՒՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ք. 560.
 99-2 Նոյեմբերէ 1877
 Lus sofarhu ՌՅԻԷ յայտ անգլմամբ
 յիւր Սորա իջեալին զիջ թիւ ամ ամբ
 Սրմամ մարդարս ասց ասոմբ թիւս
 քան մասասարս քր զքան ի
 ասաս քանս քանս զքան զքան ի
 անմայր զքան մամ մ ասարմար յայ

օսլ մայր Ս. ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑ
 ԵՒ Ա. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՑ
 ԲՒ 148 ամոյս Մեծապատիւ պարո-
 նայք Մկրտիչ Սանասարեանց եւ Փայ
 Հանդիսի Խմբագիր - տնօրէն Աբգար
 Յովհաննէսեանց եկին յուխտ եւ յեր-
 կրրպագութիւն նուիրական վայրիս Ս.
 Էջմիածնի, եւ ի 18-ն վերադարձան
 անտրի ցլամ մայր մկմբայցման յո
 զպի աջ մայր մար սրբազայս մկմ
 ու յմմանն մմկմմարբ բոզս պատրոյ
 Ս. ԱՆՆԵ ԱԼԱՃԱԼԵԱՆՑ
 մկմ մամ զք յայ ան մկմ մայր
 Յորդորանօք Մարդասիր Ընկերու-
 թեան նոր - Նախիջեւանցի Բարեպաշ-
 տոն Հի Տիկին Աննա Փիլիպպոսեան Արա-
 ճալեանց օրինաւոր կտակագրով ըստ
 անաքինասեր զգացմանցն իւր ունե-
 ցած կարողութենէն հետագայ տեղեաց
 եւ օրմանս եւ բաժին հանելու եւ նուրի-
 ըրելու անս զքանս ան մկմ մայր
 Յանուն Մայր Աթոռոյ Ա. Էջմի-
 աք մկմ ածնի. քան զք 200
 Ս. Յակոբեան վանուց եւ մկմ
 բոսարք մի մկմ մ 200
 Ս. Կարապետի վանուց ի
 թոյ մկմ մ. քան զք 200
 ի Նոր - Նախիջեւան մկմ մ
 Սրբաջ վանուց յիջ. քանս 100
 Յանուն Մարդասիրական Ընկե-
 րութեան Հայոց քան զք 3600
 Բարեգործական Ընկերութեան
 մկմ Հայոց քան զք 3600
 Ս. Լուսաւորիչ աւագ եկեղե-
 ցւոյն մկմ մ վարագոյր ար-
 քան մկմ մ քան զք 300

Հինգ Եկեղեցիաց 200
Ս. Կարապետ Եկեղեցւոյն Նիսիկի-

Թա գեղջ 100

Յիշեալ բարեպաշտ Տիկնոջ այս կտակը
եւ նպատակը բազում գոյնստից ար-
ժանի է, եւ իւր անունը անմահացնե-
լոյ Համար շատ գեղեցիկ եւ նախան-
ձելի միջոց ընտրել է, եւ կյուսեամբ զի
այլոց եւս բարի օրինակ կգառնայ ոչ
միայն Նոր - Նախիջեւանում, այլ եւ
ուրիշ շատ տեղերում:

ԳԵՐ. ՀԵՐՄԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ:

Վլատիկովկասու եւ Եկատարինոզու-

րու Ռուսական վիճակաց Առաջնորդ

Դեր. Տ. Հերման Եպիսկոպոս յանուն

եւ ի նպատ Բագրեւանդցի Հայոց էր-

կո - հարէ-ց ուրբի նուէր առաքած է

առ Վեհ. Հայրապետ Ազգիս, որոյ Հա-

մար յատուկ շնորհակալութիւն կյայտ-

նեմք հրապարակաւ:

ՀԱՆԴԷՍ ԲԱՅՄԱՆ

ՄԵՐԻՄԵՆԸ - ՅԱՂԱՆԵՆԸ ԳՊՐՈՅԻՆ

ՕՐԻՈՐԿԱՅ ՀԱՅՈՑ

Ի ՏՓԵՒՍ

Արարատ ամազոյ ընծիրցողաց արդէն յայտնի

էր Մարիամեան - Յովնանեան դպրոցին: նպատակը

եւ հաստատութիւնը, այժմ կատարեցաւ նաեւ հան-

դիսաւոր բացուելով որ եղաւ ամսոյ 8ին: Նոյն ու-

րախարար յուն տարածեցին համառօտիւ նաեւ

Տիկնիսու լրագրերն: Եւ որովհետեւ այսպիսի ազո-

գուտ հիմնարկութիւնը արժանի են ընդհանուր աղ-

գայնոց մտադրութեանը, աւերորդ չեմք համարիր

փոքր ինչ ընդարձակօրէն նկարագրել այս բացման

հանդէսը:

«Օրը պարզ էր եւ գեղեցիկ, եւ կարծես թէ կանե-

տաւորէր ազգիս Հայոց, մանաւանդ որք եւ չքաւոր

զանակաց նորին, այս նոր բուրաստանն ընացունիլը

ազգիս բարոյական եւ ուսումնական յանաշաղիմու-

թեան նոր գարունը զուշակերտութեամբ զո սխալ

Օրերով առաջ դարացին, խորհրդարանը գրադեցաւ

աշակերտութեան ընտրութեանը, մանաւանդ օրիա-

վարմից, որք կատուին «Յովնանեան» սանթ, «Եւ ոչ

րոյ թիւը սահմանեալ էր առ այժմ վարսուէ: Այս

դատարարութեան առաջարկուած օրիորդաց թիւը

արդէն երկու հարիւրէն աւելի էր: Թէպէտ կորհրդա-

րանն հարկադրուած էր իւր սահմանած թիւէն աւելի,

ծրիավարժ աշակերտութիւնը չընդունէր, բայց ուրա-

խութեամբ ընդունեցաւ քսանի չնոսրացնակի չորր

եւ պղքատ օրիորդներ եւս, որոց համար բարեբար

տիկնայք եւ պարոնայք ոմանք յանձնառու տեղից

էին: Ինքնայժար կամօք մայրաղիրք եւ հայրնորդ

լինել նոցա, եւ տարեկան թոշակը վհարելու էր 24

ուրբի ուսման եւ 3 ուրբի ուսումնական պիտոյից:

համար, եւ են սորա: «Գր յոյսով տրեան ծղով սոս

4 Տիկնի վարդաւի Գաւթեան Յովնանեանց» 3

2 Տիկնի Սողոմէ Յովսէփեան Յովնանեանց» 3

3 Տիկնի Մարիամ Վահրամանեան Գուհարեանց» 3

4 Տիկնի Վառվառէ Վասիկեան Թամաշեանց» 3

5 Տիկնի Կատարինէ Միքայէլեան Թամաշեանց» 3

6 Տիկնի Յուլիանէ Գեորգեան Թահիրեանց» 2

7 Տիկնի Նուրիէ Զաքարեան Արիստոմանեանց» 4

8 Տիկնի Վառվառէ Յովսէփեան Մելիք - Հայր-

այր մեծի կազեանց» 3

9 Տիկնի Տիրոջի Աղեքսանդրեան Մաննաշեանց» 2

10 Իշխանուհի Եւզինէ Բեհրուտեանց» 3

11 Տիկնի Բժշկապետ Բ Յարութիւն Յովնանիսեանց» 4

12 Տիկնի Մկրտիչ Սարգսեան Սանասարեանց» 4

13 Տիկնի Կարապետ Մելիք Բեկլարեանց» 4

Աշակերտութեանց միածեւ հանդերձն է մեծ կարու-

րազոյն պարեզօտ եւ սեւադոյն զովոց, այս հանդերձ-

ները պատրաստուեցան զպրոցին ծախքովը: «Սոս Կրտ

Նորամուտ աշակերտութեանց հանձնարանուած

է 8 տարեկանէն մինչեւ 13, եւ դատարանները առ

այժմ չորս, երկու փոքր նախակրթարան, մի մեծ

նախակրթարան, եւ մի առաջին դասարան:

Հանդիսին նախընթաց օրը տոմսակներով հրաւի-

րուեցան հարիւրէն աւելի պատուաւոր անձինք քա-

զանքին, ինչպէս նաեւ բոլոր անգղային, ուսումնարանաց տեսուչներն եւ ուսուցիչները, եւ միայն տեղւոյն անձնութիւնը նրատեալ եղած էր, աւելի բաղմամբ հրահարականներ չի ներդրել։

Ինչպէս որ կանխաւ որոշուած էր, ժամը 40-ին Գեր. Գարբիէ Արքեպիսկոպոս Առաջնորդը մատոյց սուրբ պատարագը կուսանաց Անպատի սուրբ Ստեփաննոս եկեղեցոյն մէջ, եւ պատարագին սկսաստորեցին պարկեշտաւորն կուսանքն ըստ վարձիի աւերո՞ւնեան՝ նարկուազուծեամբ եւ դպրութեամբ։ Երբ սուրբ պատարագը վերջանալով Գեր. Ժամանարը քիմէն վայր իջաւ՝ ընդարիս եկեղեցեաց Աւագ երէց, ներն սեւայլ եւս ըստ հանայր շուրջնուտորը, սկսան երգել «էջ Միածինն ի Հօրե» շարականը՝ այն միջոցին ըմբելաւ շուրջաւազուտ քահանայն կուստանաց Անպատի, եւ կարդաց ի լուր ամենեցուն Վեհափառ Կանթովիկոսին Հայրագիտական կոնդակը՝ որում Վեհափառը ծանուցանելով Մարիամեան Յովնանեան դպրոցին բացմամբ, օրհնելով բարեխարհ հիմնադիրները, այս ինքն հանդուցեալ զՄարիամ Յովնանեանեան Յովնանեանց մտղմելով նմա հանդիստյաւերծական, եւ զՅովնանեան Ստեփանեան Յովնանեանց մտղմելով իրեն երկար եւ երջանակաւ տ կեանք, եւ նորա բարեգործական Աստուածահանոյ եւ ազգուէտ հիմնարկութեանը յատաշարի մեծիւն եւ յարատեւութիւն՝ կյիշատակէր համառօտիւ նաեւ դպրոցին հիմնական կարգադրութիւնները, եւ կ'յորդորէր վտորհրարանի անդամներն եւ դպրոցի յետուչն եւ ուսուցիչներն այնպէս աշխատելու, որ այս բարեգործութեան պատճառ եղողները հսկան յաջողութեամբ իրենց զեղեցիկ նպատակին։

Կոնդակին ընծ երցմանէն յետոյ կատարեցաւ մաղթանք վասն Օդոստապառ Կայսեր եւ Մարիա Կայսերական բարձրութեան Գոթարքային, Կովկասի։ Իսկ յետ այնորիկ կուսանաց դասը ծայրահեղութեամբ քսանանայից կատարեց պաշտօն հանգստեան հոգւոյ բարեյիշատակ ամուսնոյն Յովնանեան Յովնանեանց։

«Այս հանդէսներէն վերջը բոլոր եկեղեցականք ընդ որս նաեւ զգետաւորնալ կուսանք՝ որ կերպէին «Յաւուրս վերջին ժամանակի» շարականը՝ եւսն ստորեկ եկեղեցիէն իջան թափօրապէս դէպի ուսումնարանը՝ եւ նկրս մտած ժամանակները երգեցին սրբոց Թարգմանաց մերոց շարականը «Յի գարեպէցին»։

00— Աստուծարանին շինուածքը, որը բարձրանը դնած է ի բեհրբութեան իշխանաց եւ վայելչապէս նորոգած է՝ ծախսելով աւելի քան յիսուն հազար ռուբլի, ընդարձակ եւ պայծառ շինութիւն է կրկնաշարկ հանդերձ մեծ եւ փոք պարսպապատ բակերով կամ սրահներով, որմնակից Անպատի կուսանաց։

Եկեղեցականք հանդերձ բազմութեամբ ժողովրդականաց ելան դպրոցին վերնայտիկի դահլիճը՝ որ զարդարուած էր կենդանադրով Կայսր եւ Կայսրուհոյ, Քալաժատանդ Մեծ իշխանին եւ նորա ամուսնոյն Կովկասեան Փոխարքային եւ նորա ամուսնոյն, ի հանդէպ նոցա մեր Վեհափառ Կաթողիկոսին մեծադիր կենդանադիր պատկերներովը, նմանապէս Յովնանեան Յովնանեանց ու նորա հանդուցեալ ամուսնոյն պատկերներովը՝ այլ եւ Վեհափառ Կաթողիկոսին զեղեցիկ շրջանակի մէջ դուռած զեղեցկադիր եւ շքեղազարդ Կոնդակովը։ Երրորդ դահլիճը լցուեցաւ հանդիսականներով եւ աշակերտուցիներով, կատարուեցաւ դպրոցին օրհնութեան հանդէսը։ Արքայան առաջնորդը յետ զահպակց անելոյն՝ հետադայ ճառախօսութեամբ հրատարակեց եւ աւետաւորեց Մարիամեան Յովնանեան դպրոցին բացումը։

«Քրիստոսապէր մեծարդոյ հանդիսականք»

«Այսպէս անա առ Աստուած աղօթքներով, սրբատուոչ մտղմանքներով, Վեհափառ Կաթողիկոսի Հայրապետական օրհնութեամբ եւ Օգոստափառ Այսեք հաստատութեամբ կրեցաւ ի այս վայրկեան Մարիամեան Յովնանեան դպրոցս օրիորդաց Հայոց։ Որքան ուրախարար հանդէս է այս՝ ճշմարտապէս ազգասէր եւ բարեսէր անձանց, մանաւանդ նոցա, որ բազդիտեն մեր աղղին այս տեսակ հիմնական կրթութեան եւ դաստիարակութեան ունեցած ամենամեծ կարօտութիւնը։ Փա՛ որ եւ պարծանք Յովնանեան աղմիւր Աղապտոհիմն այսպիսի յաւերծական յիշատակով պատիւ բերող բարերար հիմնադրաց, այս ինքն հանդուցեալ Մարիամ տիկնոջ եւ նորա ամուսնի Յովնանեան Ստեփանեան Յովնանեանց, որոյ անձամբ հանդիսաներկայ դանուիւն ա յըբան ցանկայի էր՝ մեղ ամենցուն, եւ այս բացակայութեան պակասութիւնը կեցնեն ու կ'իմիծարեն զեղ միայն նոյն բարերարի ազնուամեծար եղբայրներն, փեսաներն եւ միւս ազգականները։

«Քրիստոսաւեր հանդիսականք, այժմ իսկ լսեցինք սուրբ Աւետարանին հիանալի եւ սրտաշարժ պատմութիւններէն մէկը, որ շատ կարմարի մեր այս հանդիսին: Հրէից ժողովուրդը խեղճ աղքատ ժողովուրդը, տեսնելով մարդասէր Փրկչին մերոյ Աստուծո՛յ ծային գնութեամբ եւ զորովանօք վարուիլը ամենուն հետ, եւ թէ ինչպէս շատ անգամ հիւանդաց վերայ ձեռք դնելով՝ նոցա տկարութիւնները կփարպտէր, մէջերէն դաւակի աէր հայրերն ու մայրերը սաստիկ նրանդով եւ հաւատով իրենց մանրիկ դասակները Փրկչին ոտքը կուզէին ձգել՝ որ ձեռք դնէ նոցա վերայ եւ օրծնէ զնոսա: «Մատուցանէին սա նա մանկտի, զի ձեռն դիցէ ի վերայ նոցա»: Քրիստոսի աշակերտները՝ իբրև իրենց երկնաւոր վարդապետին պատիւը չպահել եւ նորա անհանգստութիւն պատճառել համարելով այն խեղճերուն զորժողութիւնը, չէին ուզեր թողուլ որ վաղէն ցոյնս տղայք Յիսուսի ոտքը եւ աշակերտքն ստատէին նոցա որք մատուցանէին»: Դակ Փրկչին մեր զարծաւասաց աշակերտաց: «Թող սուր մանկաւոյդ պալ առ իս, եւ մի արգելուրդրնսն զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»: Գիտցէր, սոաց, որ այդպիսի անմեղներն ունին իրաւունք վախկիլու յերկնս արքայութեան փառքն: Եւ յերկի, իմ եկեղեցւոյս (որ նոյնպէս արքայութիւն երկնից կ'իտջուի) արժանաւոր ժողովուրդ լինելու: շնորհքը: Այո՛ մեծարդոյ հանդիսականք, շատ նման կոտենեմ այսօր Տփլիսու չքաւոր ժողովրդոց եւ խեղճ այրիներու եռանդը, որով հարիւրաւորք իրենց մատաղերամ գաւախուները բերին եւ կրեին՝ նոցա ծարաւը յազեցնելու այս ճշմարիտ Աստուծապաշտութեան եւ իմաստութեան յառակ աղբիւրէն, զոր Յովնանեանց առտաճեռնութիւնը բացաւ նոցա առաջը: Այս ժամանակ, պտտուական հանդիսականք, յորում ոչ միայն մայրեր, այլ եւ հայրերը կարգելէին իրենց դասակաց՝ մանաւանդ աղջկանց՝ ուսում անելու զիմել: Եստեւով թէ թող իմ դաւակս բան զիս իմաստուն չլինի, եւ թէ կարող գրելը աղջիկ տղայոց հարկաւոր բան չէ՝ տկսէր այժմ որքան մեծ եւ ուրախալի փոփոխութիւն կայ յայսմ մասին յազդիս մերում, մանաւանդ Տփլիսու մէջ, որ ոչ թէ երկու կամ երեք, այլ եւ եթէ վեց եւ եօթը եւ անելի օրիորդական դպրոցներ ունենայինք, դարձեալ սակաւ սիտի լինէին նոքա՛ ուսման կարօտ օրիորդաց՝ բազմութեանը նայեալ:

ով: Եւ ինչեւ ցոյցիմ, ունէինք միայն զայիսմեան եւ Վարիամեան օրիորդական դպրոցները, եւ միլ եւս քանք մի մտննաւոր դպրոցներ, զորոց ամենեցուն բարեկարգ յաւաջադիմութիւնը տորքան: Եւ զովեմք՝ սակաւ է այսօր կաւելանայ ահաւասիկ նաւե Վարիամեան-Յովնանեան դպրոց, որոյ ընդարձակութիւնը շատ հաւանական է որ կարճ ժամանակի մէջ քնդ եւ անձուկ լինի՝ այստեղ դպրոց ցանկացող աշակերտութեաց համար: Եւ սոց մտք մտք յայժմ ուսման մաս յուսող եւ բերկրալից սրտիւ մկշնորհաւորեմ Յովնանեան անգլատոհմին ներկայ եւ բացակայ Ազնուականք անդամոց՝ իրենց ճշմարիտ պարճանք լինելու դպրոցին բացումը: Եւ մաղթելով ամին արեւք պրնագ յաւաջադիմութիւն եւ անսայճար յարատեւութիւն: Եւ զիս զգանցմտոցս հատկապէս գնամ մտքն զիս: Աւրախակից եւ մայր եւ մեր համակալարճու ճակատուն կուսանաց միարանութեանը, որոց ազդօգուտ զորժուէութեան առաջը կըացուի այս դպրոցս իբրև նոր ասպարէզ Աստուածահաճոյ եւ մարդասիրական ամենազովի ճգնութեան եւ առաքինութեան: Թող այս առաքինասէր կուսանք այժմէն միտարուին աներկրայ յուսով՝ թէ նոցա վարժքը մեծ պիտի լինի առաջի պարդեատուին ամենայն բարեաց նաւե ստով՝ որ հոգեւոր մայր եւ ծնող եւ դաստիարակ պիտի լինին բազմաթիւ բարեպաշտ մայրերու եւ սերնդոց նոցա: Այս աներկրայ յոյսը այս հոգեւոր ծնողաց առաքինութիւնը միշտ պէտք է մեր միտքը ձգէ կրանելի կոմիտան համոզիկոմին սրբոց Հռիփսիմեանց համար երգած ճշմարիտ եւ զեղեցիկ խօսքը, թէ՛ «Ծնան կուսանք ազգս բազումս, եւ մարք մանկունք զիրապարակս ձեռնոց: Ի պիտի սրբութեան տղոթից եւ պահոց անեցին հաւատով զարգացեալք ի Քրիստոս»: — Եւրին Քրիստոսի Տեառն մերոյ օրհնութեան շնորհիւր անին հաւատով եւ զարգանան իմպատութեամբ այս նորահաստատ դպրոցիս աշակերտացիները ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Ազգիս Հայոց: ամէն»: Եւ սոց մտք մտք մտք յայժմ ուսման յոյս ուսողս: Այստեղ եւ մատեան համբուրել սուրբ խաչք բարբաբ հիմնադրաց մեծապատիւ ազգականները: Եւ դպրոցին տեսուչ մեծարդոյ Պ. Յովնանէս Չիկիանեանցը կարողաց իւր հատը յորում դիւստորապէս կը բացատրէր օրիորդական ուսումնարանաց եւ իրական

տնորում էին երգելիկ կարաց պաշտօնը զՊ. Սամ-
 սնի ճանադրողէս պատուցչի ճղարմութեամբեամբ:
 Կոցա յետի կողմը, բառատունի պատկերազարդու-
 ճիւր երեք կարդ շարունած, շուրու մուշ կաղօթէին
 վարժունի տիկնոջ հոկողութեան ներքոյն: Եւ յարմար
 Պ. Ս. տեղ էր տեսնել թէ օրիորդաց ներդաշնակի
 բաղցրամայն եւ հրեշտակային ժամերդուծիւնը ո՞ր-
 քան կողայեցնէին ժողովուրդը: Անտեղ այդ կար-
 նուկների միմուշը ուղղած դէպի պիննակալ Հայրն
 Աստուած «դորմեան քո բանաւոր ճօտի» ասելով
 «աղսչմբ դրիկ հանդձն զհոգիս իմեր անջեցեւոր»
 որ քարատախաչերից արտաւորէ չէր քրիստոսի մի-
 Արդարեւ տեսարանը նոր էր շատերի համար սե-
 ղարմանալի: Ս. պատարազը աւարտելէն զինի աշա-
 կերտունիք յառաջ անցնելով զոյգ զոյգ իւրաքան-
 չկերոց ձեւըն մի մի ծաղիկայ փունջ հեծումովա-
 ռած, եւ ապա ինչպէս աւորք շուրու մը քանակայից
 շքեղ շուքճաներով, եւ ի վիճոյ Սրբազան Պատա-
 րագիցը զդեատաւորուած ձեւեղեցիէն տղարւս զգոյ
 սկսաւ «Անձինք նոյիրեայք» սքանչելի շարականը
 երգել տանով, «զնաց անգլիսի նորակարոյց» զպրոցը
 հանդերձ քաղմատիս ժողովրդով: Եւ զայն յայտ
 Պ. Ս. աւոր եղանակը ճշտակաւ տեւր պարզու-
 թեամբ նպաստուած էր այդ հանդիսի շքեղութեանը:
 Գարոցը հասնելուն պէս՝ զաշակերտող ճիւր կրօնցի
 Հոգեկալտեան շարականը «Այսօր անդիւր զիտուն-
 թեան»: Ժողովրդոց բազմութիւնը չտեղատրուելով
 շինութեան մէջ՝ մեծ ճամսը յուսամուտներից էին
 նայում հանդիսին: Եւ զայն յայտ արդարեւ զայն
 Գարոցի ընդարձակ զոհիւնը զարդարուած էր
 մեր առնտապուծ Աղէքսանդր գմբ. Այստեղ սե-
 ղեմափառ կաթողիկոսի պատկերներով զոյգ ուրոյն
 ծաղիկներով պսակուած: Կոցա ճակ կողմում սուրբ
 կոյս Գայիանէի փոքրիկ կենդանալիքը տր կարծես
 թէ հողի առած՝ կնայեր խնկազին իւր սանուց վե-
 րայ: Գահիճ երկարութեամբ զրաժք էր յետան մե-
 ծանաց: Երգեցողութիւնը վերջանալը յետոյ՝ նա-
 ռաշնակարդ աշակերտունի Սիծն Տէր Աստուածա-
 տրեանը կարողաց ճառ բնական ապարզ աշխար-
 հիկ ոճով, որի իմաստն էր՝ Աստուծոյ ունեցած ա-
 ռանձին խնամքը դէպի Հայոց Աղզը, սուրբ Հոյի-
 սիսեանց եւ Գայիանեանց՝ Հայաստանի վերայ ունե-
 ցած բարի ազգեցութիւնները, որոնք Աւերդի պէս

բարի մարդիկ պատրաստուած են փառազուրկ Հա-
 յաստանի արտաւորը ներդրել նորն արգանակա-
 թօսալիքերին խնամք տանելով, եւս կրթնալ մայրեր
 պատրաստելով ազգայ ճեքունդի համար: Ապա
 կատարեցաւ զպրոցի օրհնութիւնը: Երբից յետոյ քա-
 ընկրծն Վանան Տէր Յովհաննէսեանց բանիմաց եւ
 համեստափայլ Քահանայն անաց ճառ որով բու-
 կան ճարտար ըացնորեղով ուսման կարեւորութիւ-
 նը՝ մանաւանդ վանտնց համար զողկց Պ. Ղեւոնդի
 այդ վեմ զործը, որ հայրաբար պատասպարեց հա-
 ըիւրանոր օրիորդներ: Եւ յզգայն սե յգատաց յամ-
 ան Հանդիսի վերջը օրիորդները հիմն «Боже Царя
 Христа» եւ ապա Գերագագաիւ Երկուար Արքե-
 պիսկոպոսը հրաւիրեց ժողովրդոց մասնակցի սեղա-
 նին, որ տեսնց մի ամբողջ ժամ, որի միջոցը բաղց-
 րամայն չերգոււմ էր ազգային երգեր, բաւա Պ. Ամին
 Տէր Գրիգորեանցի մի նուազը յայդ դէպի համար
 շարադրուած: Եւ զայն ըստ իմ մտածման զայն
 ընթացքի Մեծագործ Աղէքսանդր Կայսեր սե
 ղեմափառ Գէորգ Ազգականաւ կաթողիկոսի կնի-
 ցը մի մի քաճակ զինի աշայոյ շոյեւր զպրոցի
 տեսուչ Պ. Յակնակարեանցը քանի մի զհամաւոր
 բայց բուական ազգու խօսքերով քացարեց Պ. Ղե-
 ւոնդի ազգաշահմայն զործը սուսաշարկելով հանդի-
 սականաց ըմպել մի քաճակ նորա կենացը: Երբ սի-
 ընով եւս կեցցեցնի զպատրուեցին հանդիսականը:
 Ապա հանդիսականներէն մէկը անոց քանի մի խօսք
 օրիորդաց զպրոցի անուց Յովսէփ վկեկանց բահա-
 նայի մասին՝ շատ ճիշտատորապրելով նորու զոր-
 ծունէնութիւնը: Երբ չնայելով մեծամեծ կոչընդոսների
 անտեղի բախապանացն մանաւանդ զրամատուր գա-
 կասութեանց, անոց սովհետեւ յամենայն արիտե-
 թեամբ է շարունակել նոյն սքանկան: Եւ զայն շոյեւր
 անան տարի անընդհատ, զհասցնելով զպրոցը սոյ-
 սիսի տօնելի աւուր: Եւ առաջարկեց հանդիսականաց
 բարեխաղձել Յովսէփ բաղմալատակութեամբ հանա-
 ինս աւելի համբերութիւն եւ կարողութիւն: Ամե-
 նեքեանց մեծատրով եւս պատրաստակունութեամբ
 յիշեալ քահանայի համար քաճակներ դատարկեցին:
 Իսկ Պ. ժամանակց յիշեալ քահանայն սարկու-
 շարժ խօսքերով յայտնեց, թէ նախառանց պար-
 ծելուս իրքեւ քահանայ եւ Հայոց զուրբ եկեղեցւոյ
 սպասմարդ պարտաւոր է նանաչում իւր անը

հսկել լմիշտ իրան հանստացած ժողովրդոց բարո-
 բուծեան համար. եւ բնա Տէրունեան բանին. « զոր
 ինչ պարան էր առնել պարս. « եւ զսուսալով զէսի
 ուսուցիչները՝ սկսող. « ինձ չէ պատկանում այդ
 քիաշուրմ շնորհակալիքները. այլ եւ պարունուսու-
 ցիչներին. որոնք իւրեանց պաշտատեթիւնը սերբէր
 չեն խնայել շատ անգամ անխոնջ մատակարարելու
 եւ երբեմն աննշան ռոնկադրամով իսկ ժողովուրդը
 սրտանի ինչ ամենայն զոհոնեակութեան մարտնչ
 զսրտի օտնութեան համար. « ինք պտղեղութեամբ
 նակ դատարկ չեն դարձրել նորան, որոնք խնդրեց
 շնորհակալութիւնը մատուցանել. « Աւսուցչաց եւ
 Հոգաբարձուհեաց, որք սիրով կատարեցին. « զորք
 Այս հանդիսից յետոյ կատարեցաւ հոգեհանդըս-
 տեան կարգը վասն հանդուցեալ Աղէքսանդր ար-
 ժանայիշատակ երիտանարդի եւ բրջ Նորն ջերմ
 խնդրուածով ժողովրդեան. « որի վաւարտելէն զկնի
 Յովսէփ բանաստեղծ կարգաց մի պատշաճաբար ե-
 իմաստալից ճառ դամբանական իովանդակութեամբ.
 « Սրանով նւարտեցաւ հանդէսը. եւ ժողովուրդը
 ցրուեցան զոն սրախ. բայց ի վաճանց որոնք շնոր-
 ւէս հիւանդիցան ի ճաշկերոյն կրկնել տալով օրի-
 ուղիսց անդալին երկերը. « սոյ յորցա ճառ. « սոյ զսոյ
 Այս առթիւ կարեւորութիւ համարուեցաւ երկ-
 ոք վարարանութիւնէր Մշակ Ղրաղիւց 74 համա-
 բնութեւ պատուով հանդիսի անտիկի իւր վարդի վե-
 րոյ ստորագրութեանը վիճ պարտնէն զորում, « որը
 դուրս գալով իւր համատարածից շատ թափառե-
 լուց յետոյ վերջապէս սկսում է անհամես կեր-
 սով աստիքակի ճայդ հանդէսը. « ընթացողը կարող
 է պարզ տեսնել թոր այժմ աճաղիքը կարծես թէ
 ճիղնմալի է լինում. « ճշմարտութիւնը քողարկելու
 հանդիսի քոթոր իմաստները աղճատելով իբր թէ ան-
 մեն սպիտակին պէճ ասելով անձ պաշտօն պիտի
 մատուցանել իւրանման հակառակորդաց. « Բն լիցի-
 վարուն յօդուածագիրը այդ շինձոն ստորագրու-
 թեամբ ընթերցողաց սիրտը աւելի զարացոյց, մա-
 նուանդ հանդիսին աներկայ եղող անձանց. « Ահա
 ինչպէս է նա սկսում կարասել օրիորդաց զսրտիցի
 հրաւիրանաց յայտարարութիւնը. « ծարս անելով
 թէ շարադրութիւնը, « թէ կէտապրութիւնը եւ թէ
 պատարագը բայց ինքն էլ ուշ չի դարձրել իւր ան-
 համարուածի վերայ, որ ամեն պատրերութեանց

մէջ աւելորդ բայերով է լցրել. « Գարոյնի հրաւիրման
 յայտարարութեան մէջ չկայ բոլորովին որ Պօղոս
 եւ Պետրոս եկեղեցուն « եպիսկոպոսական պատա-
 րանք պիտի լինի. « բնութեամբ պատարագը մի է ե-
 կեղեցոյ ամէն վարդի սրբազան պաշտօնէից հա-
 մար. « թէ կաթողիկոսի « թէ Արքեպիսկոպոսի, « թէ
 մեծրաստիւթի, « եպիսկոպոսի « վարդապետի եւ քահա-
 նայի, վասն զի ամենեքեան կոչումն են քահանայ
 Աստուծոյ եւ պատարագից. « որս ոչ ճանաչողով
 « Յառաջ անելով յօդուածի ընթերցումը կտու-
 նէր, « որք անամակալիքը մեծամատիւ Պ. Պ. Եւն-
 դի « ռոնկմարանը անշանակում է շինձոն. « Ս. Պօ-
 ղոս « եւ Պետրոս « եկեղեցոյ զաւթում. « Ես չեմ
 կարծում, « որք պատարագագիրը զաւթ թառի
 նշանակութիւնը, « հոգեւոր զսրտի « առաջնակարգ
 ուսուցիչներին « լինելով ի հասկացած զլինի, « բն
 որում եկեղեցոյ զաւթում երբէր պարզ չեն շի-
 նում. « մանաւանդ « թէ Ս. Պօղոս « եւ Պետրոս ե-
 կեղեցին զաւթ էլ չունին. « Գուցէ պարտը զա-
 լին թարը սկսուպի « սրահի գլխամարտի « տեղ է
 լինողնում որ ուսուցիչի համար շատ աններելի ս-
 խալանք է. « Ուրեմն քալի կրկնէր, « որ յառաջ պար-
 նը իւր արջի հաստ դերանին նայէր, « եւ ի զուր ա-
 դի անխոնջ մշակների սիրտը չկտորէր. « նրանց ան-
 նը շնորհակալները մամուկի միջոցով ի հրապարակ
 հանելով. « Մի՞թէ այդպէս պէտք է իրախուսել ուսու-
 ցիչներին. « Բն յ որքանութիւն ազդեց ձեր սրտին
 նամակալիք. « ծաղրելով վարձուեւոյ ձեռնոցները, « թէ
 նորս սեւ էին. « գուցէ այդ պարկեշտ կերպ սպիտակ
 ձեռնոցներ չի ունեցել իւր անքառութեան պատ-
 ճառաւ մի՞թէ անբաւելի մեղք է նրա համար. « որ
 « ընթերցողը պատրաստուէ կարդալով յիշեալ նա-
 մակալի « յօդուածը որով այդ պառը ժողովեալ
 հոգեւորական զարարագան եւ շատակերպ ձեւաց-
 նում « հետեւեալ անդեղի իջտերով, « թէ « ինձ թուե-
 ցաւ, « որ շարականը այդ իրանէից շտապով էր եր-
 վում. « թեւոյ շարունակում է. « թէ « մի աշակեր-
 տունի « կարողաց իրան համար « անհասկանալի մի
 ճառ « որ պատու էր, « թէ նորին « աստուծոյ շնոր-
 հիւ է շինվել ուսում նարանք. « սակայն զգո հոն « որ
 « Սիոն Տէր « Աստուածատրեանց օրիորդը « որ Գա-
 յիանեան զսրտի աշակերտութիւններէն. « յառաջ տեղ մն
 լինելով, « ոչ « թէ իրմե համար « անհասկանալի ճառ

կարողաց, այլ եւ չհասկացողներն համար անդամ հասկանալն բառերով շարադրած: Այդ պարկեշտ օրիորդին իւր կատարելութեանց համար հրատարակուի են վարժուցի Գայիանեան դպրոցը: Իսկ ես ամբողջ ճառը ուշի ուշով կարդալով՝ չգտայ նորա մէջ ասած, « նորին աստուծոյ շնորհիւ է շինվել ուսումնարանը » բառերը, այլ այդ առարկայի համար գրած էր, « օրհնեցէր միաբանութեամբ բարերար աղայ Ղեւոնդը իւր կենդանեաց եւ ննչեցիլոյ հետ, որ իւր անըմ մեծացնելով Աստուծոյ եւ ազգի առաջ՝ այսօր այս դեղեցիկ շինուածը իւր սեպհականութեամբ կառուցած՝ ընծայարեքեց անդի օրիորդաց դատարարականեան համար»: Արեւմն պարզապէս երեւում է, որ նամակագիրն « աննպատակ իւր պարկեշտ լորճովից չէր հուրս փկել », այլ նախատակաւ, ըստ որում Գայիանեան դպրոցի յայտարարութիւնը դրպանը գրած՝ յառաջագոյն մտածում էր երկայ հանդէսը տեսնել եւ բոլորին ծաղր ու ծանակ շինել իւր փառաւոր շինծու յօղուածովը:

Մեզ անհասկանալի թուաց պ. նամակագրի երկու տող գրուածը եւս թէ « հանդէսը վերջացում է Տեսնել դամբանական ճառով թէ ինչ է մտնա (լաւ նշան է) »: Եթէ պ. նամակագիրը իրեն մարդարէ, քառքի գամբանական ճառից նախագուշակում է Գայիանեան դպրոցի սարաբախտութիւնը, չծրած, չժողկած, թառամիրը եւ չօրանալը, հապա պէտք է խնդրել Աստուածանից, որ դէժ մեծապատիւ Ղեւոնդի ջերմտանդութեանը խնայի: Մի միայն աղօթքը բաւական չնամարելով այդ թշուառութեան անաջն առնելու, այլ եւ նիւթական օղնութիւնը ի կողմանէ իմ պտտուական հայրենակցաց, ուրեմն կաղաչեմ կարելին փութով օգնել այդ հասաատութեանը, որ զուրցէ խախտուի այդ գորշակութիւնը: Իսկ ահաւայ Յովսէփ Բահանային խորհուրդ կտայինք, որ իրան հաւատացած դպրոցը չար արքից եւ չար եխաբից պահպանելու համար եւ մարդարեան կանանցիկ թեթափիլը արդեւիկու միակ շանթարդի պ. Տ. Գ.

եանցին ուսուցիչ հրաւիրելն է բաւական, որ դէժ Ազգիւնաց դպրոցաց պէս Գայիանեան դպրոցն էլ որի կանգնացնէ եւ ապա հետանայ
Մատաղահաս բանաստեղծ Պ. Էմին Տէր Գրիգորեանը իմ կարծիքով պէտք է աւելի խրախուսել, նորա միքը օր ըստ օրէ արդիւնաւորելու եւ կա-

տարեկանործելու: նպատակաւ քան թէ կծու եղանակով խօսքերով խոցողով տրով շնորհեշտութեամբ կարելի է խնդրել հէնց սկզբունքը նորա բանաստեղծական աստիճակը: Առայժմ լաւ կլինէր յօղուած պրին, որ Պ. Էմին, որ ամառուքը երկը կրթիական երանակով վերլուծէր, որով արդարեւ պատկան ծանայութիւն կ'աւանդուէր զայն նորա կրթիական դրականութեանը, սեծ շնորհակարութեան մարտնչարտով ըստ որում չաշխարհի կ'արարողորջ փնդուն դեռ լաւ չմշակուած կլինէր: Կարծես ինչ արդարեւ շնորհակարութեան: Այդպիսի օրն ընծայելով Պ. Էմինը աւանելով իւր թերութիւնները: միանգամ կ'ընդունար յօրճելու խախտելի հակառակ կանոնի դրականութեան: Երա խոսակցութիւն ընծայելով Շատ դրողիտաց ի շարս որոց, եւ Մշակի Թորթակից կանցին շնորհեշտ էլ թուում հոտանաւոր շարադրելը. բայց թող կործէ կտեսնէ՞ որ ամեն մարդոյ տունած չէ ողի բանաստեղծութեան: Կցանկայի մ. նամակագրէն հարցնել, Թէ արդեօք իւր մտացածին Գայիանեան դպրոցի մանդիսի ստորագրութիւնը աւելի համով է գրած Պ. Էմինի երկը: Միթէ այն աւուր հանդիսի մէջ ոչինչ միւրեւարական բան չդուան նա հաղորդելու մեր փրկելի համարեցեցը, բաց ի բամբասանից եւ ուրիշի դրծիւր արտասելուց: Արդեօք կարող էր նա գրքունել ինչպէս ընծայողը ծանօթացուցայն աւուր հանդիսի ստորագրութիւնից, եւ պէտք է պսել իւրեզով որ հանդիսի բոլոր ասած ճառերը պարծ էին այնքան վեհա եւ բարձր, որքան բարձր էր եւ վեհա Պ. Ղեւոնդ Ղաղարիանի դորճը: Այլ զմտաստանով ցոյց յիմազգի գրքու մանակ իմառ զեւրոյն մարդոց զոյգ զոյգ անգի իզմում

Ի 28 Հ. 17. 1877.

Սէրեան.

ԱՍՏՐԱԽԱՆԵՆ.

Խմբագրութեան Ընթացքի Անադրոյ:

Որովհետեւ Հայկական կեանքի մէջ ամենեցուն ուշադրութիւնը դրաւուած է ուսումնարանների հարցը, որոնց մէջ պէտք է զարգանայ եւ նորանայ մեր երկսնուր մասունկ սերունդը՝ որ մեր ժողովրդան քարու-

բանդ եղած մտւորը եւ բարոյական կեանքին ծե-
տայնե ուղղութիւնը վանորոյ կիրութեամբ միջոցաւ
Արարածայ հետադարձ յայտնել ի տեղեկութիւն հա-
մազի ամենամիտելի ժողովրդոց: Գրասեպագ մտաւ
մա Ստորանկանայ Հայոց Հոգևոր Ժխական երկուց
սեռից Գարոնցաց Հոգաբարձունքից երկուքը Սիմեոն
Մարտիրոսեան պարոն Պօպուկեանց եւ Միքայել Ամ-
բակունեան պարոն Բուրջալեանց ազգային հարազա-
տութեամբ վարելով իրենց ստանձնեալ վսեմ պաշտօ-
նը ի բաւականութիւն ժողովրդեան եւ յօղուտ մտա-
ւոր եւ բարոյական զարգացման հայազգի երկուց սե-
ռից մանկանց քաղաքիս, ծառայելով առաջինն ինն
ամե երկիրորն մի տարի եւ չորս ամիս, համաձայն
իրենց խնդրանոց արժակիցեան Հոգաբարձական պաշ-
տօնէն ընդունելով զբաւոր եղանակաւ օրհնութիւնը
տեղական գերապատիւ Առաջնորդի եւ գոհունակու-
թիւնը ծխական ժողովրդոց, իսկ փոխանակ նոցա
ծխական ժողով մէջ բաղմունեամբ ձայնից ընտրուե-
ցան եռամեայ վարանակաւ պարոնայք՝ Բենիամին
Յովհաննէսեան պարոն Մէլիքեցեանց եւ Աղէքսանդր
Վարդեան նարոն Աղաճանեանց: Եւ որով որոշուող
Հայ հասարակութիւնը լիայոյ է՝ որ նորընտիր պա-
րոնները կիսական ժողովրդեան յոյսը եւ ակնկ սու-
թիւնը հոգալով իրենց նախորդներին նման Ազգային Հո-
գեւոր գարոնցայ յառաջադիմութեան համար, որոնց մէջ
միայն կարելի է մեր Հայաստանեայց Առաքելական
սուրբ Եկեղեցոյ կրօնը եւ բազմահարուստ լիզուն
եւ ողիւն պահպանել, ստատրաստելով արդիս հասար
տիկնէ Հայեր եւ պարտագնանայ հայրեր ու մայրեր:
Ռուսաստանի Ամենադրամած Տէրութեան հիւս-
տարիմ հպատակ Հայկեան ազը երջանիկ պէտք է
համարէ իրեն որ իւր ընդհանրական ազդասէր
Հայրապետի Տ, Տ, Գէորդայ հանրաշան տնօրէ-
նութեամբ ունի ամեն հայաբնակ քաղաքներում եւ
փիւղերումը զրապիտութիւն տարածող Ազգային Հո-
գեւոր — ծխական զարոններ իւր չեւոր ժողովրդի
տղայոց եւ աղջկանց մտաւոր եւ բարոյական կրթու-
թիւն տալու եւ իւր ապագայն ազատելու տղիտու-
թեան խաւարէն, միայն յնյժ ցանկալի է որ Ազգիս
միջի հարուստ եւ կարող անձինք հեռատեսութեամբ
քաղցր ակնարկութիւն եւ խոհեմ ուշադրութիւն դարձ-
նեն այս աղաջին կրթարաններին, որոնք ազգութեան
համար մեծ նշանակութիւն ունին, եւ որոնց յարա-

տեւութեան եւ յառաջադիմութեան համար Ազգային
Հայրապետը ամենայն Հայոց չէ խնայել եւ չէ դա-
նարում Թափել իւր ճիգը: Եւ որով որոշուող
Գրասեպագ մտաւ մա Ստորանկանայ Հայոց Հոգևոր
Ժխական երկուց սեռից Գարոնցաց Հոգաբարձունքից
երկուքը Սիմեոն Մարտիրոսեան պարոն Պօպուկեանց
եւ Միքայել Ամբակունեան պարոն Բուրջալեանց
ազգային հարազատութեամբ վարելով իրենց ստանձնեալ
վսեմ պաշտօնը ի բաւականութիւն ժողովրդեան եւ
յօղուտ մտաւոր եւ բարոյական զարգացման հայազգի
երկուց սեռից մանկանց քաղաքիս, ծառայելով առաջինն
ինն ամե եւ երկիրորն մի տարի եւ չորս ամիս, համաձայն
իրենց խնդրանոց արժակիցեան Հոգաբարձական պաշ-
տօնէն ընդունելով զբաւոր եղանակաւ օրհնութիւնը
տեղական գերապատիւ Առաջնորդի եւ գոհունակու-
թիւնը ծխական ժողովրդոց, իսկ փոխանակ նոցա
ծխական ժողով մէջ բաղմունեամբ ձայնից ընտրուե-
ցան եռամեայ վարանակաւ պարոնայք՝ Բենիամին
Յովհաննէսեան պարոն Մէլիքեցեանց եւ Աղէքսանդր
Վարդեան նարոն Աղաճանեանց: Եւ որով որոշուող
Հայ հասարակութիւնը լիայոյ է՝ որ նորընտիր պա-
րոնները կիսական ժողովրդեան յոյսը եւ ակնկ սու-
թիւնը հոգալով իրենց նախորդներին նման Ազգային Հո-
գեւոր գարոնցայ յառաջադիմութեան համար, որոնց մէջ
միայն կարելի է մեր Հայաստանեայց Առաքելական
սուրբ Եկեղեցոյ կրօնը եւ բազմահարուստ լիզուն
եւ ողիւն պահպանել, ստատրաստելով արդիս հասար
տիկնէ Հայեր եւ պարտագնանայ հայրեր ու մայրեր:
Ռուսաստանի Ամենադրամած Տէրութեան հիւս-
տարիմ հպատակ Հայկեան ազը երջանիկ պէտք է
համարէ իրեն որ իւր ընդհանրական ազդասէր
Հայրապետի Տ, Տ, Գէորդայ հանրաշան տնօրէ-
նութեամբ ունի ամեն հայաբնակ քաղաքներում եւ
փիւղերումը զրապիտութիւն տարածող Ազգային Հո-
գեւոր — ծխական զարոններ իւր չեւոր ժողովրդի
տղայոց եւ աղջկանց մտաւոր եւ բարոյական կրթու-
թիւն տալու եւ իւր ապագայն ազատելու տղիտու-
թեան խաւարէն, միայն յնյժ ցանկալի է որ Ազգիս
միջի հարուստ եւ կարող անձինք հեռատեսութեամբ
քաղցր ակնարկութիւն եւ խոհեմ ուշադրութիւն դարձ-
նեն այս աղաջին կրթարաններին, որոնք ազգութեան
համար մեծ նշանակութիւն ունին, եւ որոնց յարա-

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ե Ն

Սեւանու անապատէն փոխադրուելով
Ս. Հախիճեանց վանուց միաբան կար-
գութեամբ Յովակիմ Պաղարեանց Յշականցի
եւ Աստուածատուր Տէր Մարգարեանց
Պարդեանց Հ. Նախիճեանցի Արեղայք
իւրեանց յանձն առած եւ ուխտած կրօ-
նաւորական կարգի ընդ դէմ՝ միան-
գամայն Քրիստոնէական զգացմանց եւ
պարտաւորութեանց հակառակ՝ դրա-
մանենդութեան քրէական յանցանոց
մէջ մեղսակից գտնուելով եւ ստուգ-
ւելով հեռադատութեամբ եւ քննու-
թեամբ Քաղաքական Իշխանութեան
ուստի եւ այսուհետեւ եկեղեցականու-
թեան անունը եւ կոչումը կրելոյ՝ ինչ-
պէս նաեւ ի տաճարի Տեառն Աստու-
ծոյ ծառայելոյ իտպառ անարժան դա-
տուելով, ըստ հրամանի ՎԵՏ. Հայրա-
պետի ամենայն Հայոց՝ այսօր՝ յ30-ն
ամսոյս (Նոյեմբերի) բոլորովին լու-
ծուեցան եւ զրկուեցան ի Քահանա-
յական եւ ի Կրօնաւորական կարգէ եւ
ստտիճանէ, եւ մերկացուցեալ յեկե-
ղեցական զգեստուց իբրեւ լոկ աշխար-
հական յանձնուեցան Քաղաքական
Իշխանութեան: